


Վ. ԱԼԵՔՍԵՅՆ, յեպ Վ. ՊՐՈՒՆՑՈՎ,

Ա 178

ԹԵԹԵՎ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԶԵՆԻՔ



Վ. ԱԼԵՔՍԵՅԵՎ և Վ. ՊՐՈԽՆՅՈՎ,

ԹԵԹԵՎ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԶԵՆՔ

A 1
2600 / 6006



Մայոր Պ. Սպեքտրիկ և գնդապետ Պ. Պրունցով.
«Թեթև հրաձգային զենք»:

Դրսույկը տալիս և ընդհանուր հասկացողություն
թեթև հրաձգային զենքի մասին (հրացան, ձեռքի գըն-
դացիր, անձնական զենք, ձեռքի նոնակներ և հրացա-
նային նոնանետ): Դրսույկում պատմվում է թեթև
հրաձգային զենքի դերի մասին, ինչպես և այն մասին,
թե ինչպես և այդ զենքը գործադրվում մարտում:

Ձեռքի և հրացանային նոնակներին վերաբերող հատ-
վածը գրել ե Վ. Պրունցովը, մնացած հատվածները՝
Վ. Ալեքսեյեվը:



ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԶԵՆՔԸ

Հրաձգային մարտում հաջողություն ձեռք բերելու համար տնհրաժեշտ ե հմտորեն զուգակցել կենդանի ուժի, — հետևակի ու հեծելազորի մարտիկների — ռարծումն ու հարվածը կրակային բոլոր միջոցների՝ հուժկու կրակի հետ։ Հետևակի ու հեծելազորի այդպիսի կրակային միջոց ե հանդիսանում երածգային զենքը, այսինքն՝ հրացանները, զնդացիրները, ձեռքի ու հրացանի նոնակները, ատրճանակները, պիստոլետները, ինչպես նաև զումարտակային հրետանին։

Հրաձգային զենքը կարելի յէ ստորաբաժանել թերեվ ու ծանր զենքի։ Թեթև հրաձգային զենքին են պատկանում հրացանները, ձեռքի զնդացիրները, "ատրճանակները, պիստոլետները, հրացանային ու ձեռքի նըռնակները։ Ծանր հրաձգային զենքին են պատկանում հաստոցավոր զնդացիրները և զումարտակային հրետանին։

Բոլոր պատերազմներում, վորոնց թվում նաև ամենավերջին պատերազմներում, թե՛մ հրաձգային դենքն ունեցել ե հսկայական նշանակություն՝ մարտում հաջողություն ձեռք բերելու համար:

1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմի սկզբում, յերբ զորքերը հաճախ վատ եյին ողտագործում իրենց հրետանին, պաշտպանվող զորքերը սովորաբար հաջողությամբ յետ եյին մղում մեծ թվով հակառակորդի զրոհները հենց միայն հրացանային կրակով:

Պետք ե ասել, վոր այն ժամանակ դեռ ամենեին ձեռքի զնդացիրներ չկային, իսկ հաստոցավոր զնդացիրներն այնքան քիչ եյին, վոր ճակատի առանձին մասեր ամենեին չունեյին: Հաջողություն ձեռք բերելու համար հարձակվողը պետք ե ճնշեր հակառակորդի հետեւակին իր հրետանու կրակով: Առանց դրան՝ հարձակվողը լպաշտպանվողի հրացանային կրակից այնպիսի կորուստներ եր կրում, վոր զրոհն անխուսափելիորեն ձախողվում եր:

Նույն այդ համաշխարհային պատերազմի տարիներին հատուկ նշանակություն ստացան գերազանց զերդիպուկ հրաձիգները — սնայպերները, վորոնց ձեռքում հրացանն ահեղ զենք եր դառնում: Հմտորեն թագընվելով՝ տեղանքի խորշերում և հատուկ բներում, սնայպերներն անվրեպ հարվածում եյին՝ սպաներին, զնդացրորդներին և դիտողներին, յերբ նրանք անզգություն դուրս եյին ցցվում խրամատից:

Հանրածանոթ ե նույնպես չինական սնայպերների հերոսական ու հաջող պայքարը Զապեյի (Շանհայի քաղաքամասերից մեկի) պաշտպանության ժամանակ,

1932թ., ճապոնական հափշտակիչների դեմ: Զնայած այն բանին, վոր ճապոնացիներն ունեյին բազմաթիվ տունկեր ու սավառնակներ, չինացիները համառորեն պաշտպանվում եյին՝ ստիպելով ճապոնացիներին չափանց դանդաղ և մեծ կորուստներով առաջ շարժվել Չապեյի ավերակներով: Ճապոնացիների առաջխաղացման համար զլխավոր խոչընդոտներից մեկն եյին հանդիսանում չինական դիպուկ հրաձիգները: Նրանք հմտորեն թագնվում եյին ավերված տներում, խճի ու աղյուսի կույտերի հետեւում և հրետանային արկերից առաջացած ձագարներում (փոսերում): Յեվ հենց վոր ճապոնական հետեւակը յերեւում եր Չապեյի փողոցներում, նրանց սպաներն ու դինվորներն իրար հետեւից գուրս եյին զալիս շարքից՝ հարվածվելով չինական սնայպերների գնդակներից: Ճապոնացիները ստիպված եյին լինում առանձին՝ առանձին գտնել այդ սնայպերներին, ծախսել տասնյակ արկեր՝ նրանց ծածկարանները ավերելու համար և տվյալ շրջանը սնայպերներից մաքրելուց հետո միայն սիրտ եյին անում առաջ շարժվել և գրավել այն:

Բայց հրացանն ուժեղ և վոչ միայն իր դիպուկ կրակով, այլ մոտակա մարտում, բռնամարտում մեծ նշանակություն ունեն սվինն ու հրացանի կոթը:

Քաղաքացիական պատերազմի տարիներին Կարմիր բանակի հերոսական գնդերը քանիցս իրենց համար սվիններով ճանապարհ են բաց արել դեպի հաղթանակ: Ահա թե ինչպես ե, որինակ, տեղի ունեցել մարտերից մեկը Վրանգելի ճակատում:

1920 թվի հունիսին Վրանգելը, Ղրիմում նստած, փորձեց յետ մղել Կարմիր բանակին դեպի հյուսիս:

Սպիտակներն առանձնապես ուժեղ եյին ճնշում Որենիսովոյի կողմից: Այստեղ եյին գտնվում դբողզովյան յերկու ընտիր դունդ, վորոնք մեծ մասամբ բաղկացած եյին սպաներից: Յուրաքանչյուր դնդում կար մինչև 1200 սվին: Բացի դրանից, դբողզովականների տրամադրքության տակ գտնվում եյին 2 դրահապատ մեքենա և մինչև 4 հազար հեծելազոր:

Դբողզովականների գեմ ուղղված եր Պետրովրադի և Մոսկվայի ռազմական դպրոցների կուրսանտների մի համահավաք բրիգադ:

Հունիսի 28-ին բրիգադը շարժվեց գրոհելու Որեխովոն: Մութն ընկնելուն պես կուրսանտներն «Ինտերնացիոնալ» յերգելով ներխուժեցին քաղաքը: Հակառակորդը համառորեն պաշտպանվում եր՝ մեծ չափերով գործադրելով ձեռքի նոնակներ: Կուրսանտները ձեռքի նոնակներ չունեցին: Այն ժամանակ նրանք գործի դրին սվինները: Բոնամարտեր եյին տեղի ունենում համարյաց յուրաքանչյուր փողոցում: Կուրսանտները մինչև 12 անգամ սվինամարտով դրոհում եյին առանձին ամրացված կետերը և գիշերվա դեմ կոտրեցին հակառակորդի դիմադրությունը:

Այսպիսով սվիններն ողնեցին կուրսանտներին՝ սպիտակներին ջախջախելու և քաղաքը զրավելու:

Խոշոր դեր էն խաղում մարտում նաև ձեռքի նոնակները: Նրանց միջոցով շատ հաճախ հաջողվում ե կանգնեցնել հակառակորդի հարձակումը կամ կոտրել պաշտպանվողի վերջին դիմադրությունը: Որինակ, ահա թե ինչպիսի դեր խաղացին ձեռքի նոնակները 1918 թ. զարնանը անզիփացիների ու գերմանացիների միջև՝ Լաֆոնտենի մոտ տեղի ունեցած մարտում: Այստեղ հար-

Ճակվող գերմանական գորամասերը դեմ առան անզլիւ-
ացիների ամրություններին: Զնայած հրետանային ու-
ժեղ կրակին, վոր գերմանական մարտկոցները գործա-
գլրում եյին ամրությունների վրա, անզլիացիները
սպանիչ կրակ եյին բացում ամեն անդամ, յերբ գեր-
մանացիները փորձում եյին հարձակման անցնել: Գնդա-
ցըրային կրակը բառի բուն խմաստով հնձում եր՝ լա-
քափակոցները կտրատել փորձող խիզախներին: Գեր-
մանական մարտկոցները մի անգամ ևս հրետանային
պատրաստություն կատարեցին: Ողտագործվեցին նաև
հրանետները: Սակայն այդ պատրաստությունից հետո
ել ամրություններին մոտեցող գերմանական զինվոր-
ներին դիմավլորում եյին գնդացիրների կլակով: Այն
ժամանակ գերմանական զինվորներն սկսեցին ամրու-
թյունների վրա ձեռքի նոնակներ նետել և զրոհի զը-
նացին: Միայն զրանից հետո նրանց հաջողվեց զրավել
անզլիացիների ամրությունները:

Զեռքի նոնակները մեծ հաջողությամբ գործադրվում
են նաև տանկերի դեմ: Այսպես, որինակ, խսպանական
հանրապետականները, վորոնք հերոսական պայքար են
մղում խոռվարանների և խտալական-գերմանական ին-
տերվենտների դեմ, լայն չափով ողտագործում են նըռ-
նակները՝ տանկային գրոհները յետ մղելու համար:

Մոտակա մարտում հաճախ փրկում ե անձնական
զենքը՝ ատրճանակներն ու պիստոլետները:

Այս բոլոր որինակները ցույց են տալիս, վոր հրա-
ցաններն ու ձեռքի նոնակները հմուտ և քաջարի մար-
տիկների ձեռքում հանդիսանում են ամենաուժեղ զին-
քը, առանց վորի անհնարին ե ժամանակակից մարտը:
Հասկանալի յե, վոր ձեռքի գնդացիրները, վորոնք հրա-

ցաններից տարբերվում են ամենից առաջ իրենց հրա-
ձըզու թյան արագությամբ, Ել ավելի յեն մեծացնում
մարտում թեթև հրածային զենքի դերը:

Հրածային զենքի գերե ե—զնզակներով ու բեկոր-
ներով հարվածել հակառակորդի կենզանի ուժը մին-
չեվ բռնամարտի սկիզբը:

Հարձակման ժամանակ հրածային զենքն ստիպում
է հակառակորդին ծածկվել զնդակներից, սեղմվել
զետնին և դրանով թուլացնում է հակառակորդի կրա-
կի գործողությունը, թուլացնում է նրա զիմաղը ու-
թյունը և հնարավորությունն է տալիս առանց մեծ կո-
րուստների ընդհուպ մոտենալու թշնամուն, ներխու-
ժելու նրա դասավորության մեջ և վերջնականապես
ջախջախելու նրան բռնամարտում:

Պատապանության ժամանակ հրածային զենքը հնա-
րավորությունն է տալիս կանգնեցնելու և քայլայելու հա-
կառակորդին, նրա հարձակումը յետ մղելու և մեծ կո-
րուստներ պատճառելու նրան, իսկ մի քանի դեպքերում՝
վճռական հանդիպական հարվածով թշնամուն վոչնչաց-
նելու:

Հրածային զենք ունեն վոչ միայն հետեւակը այլ և հե-
ծելազորը: Գնդացիքներով զինված են տանկերը, զրա-
հապատ ավտոմոբիլները, զրահագնացքները և մարտա-
կան սավառնակները. իսկ ինքնապաշտպանության հա-
մար հրացաններ ունեն զորքերի մասնագիտական տե-
սակների այն բոլոր մարտիկները, վորոնց հրացանը չի
խանգարում մարտում՝ իրենց մասնագիտական աշխա-
տանքը կատարելու: Հրամանատարների և այլ տեսակի
զենք չունեցող մարտիկների անձնական պաշտպանու-
թյան համար ծառայում են ատրճանակներն ու պիս-
տոլետները:

Այսպիսով հրածային զենքը հանդիսանում է բա-

նակում գենքի ամենատարածված տեսակը, վորը պետք է ճանաչի և կարողանա մարտում ոգտագործել յուրաքանչյուր մարտիկ:

Հրաձգային պատրաստությունը Կարմիր բանակի մարտական ուսուցման կարևորագույն տեսակներից մեկն ե: Պաշտպանության ժողովրդական կոմիսար Խորհըրդային Միության մարշալ ընկ. Վորոշիլովն ասում ե. «Մենք պետք ենասնենք և կհասնենք այն բանին, վոր յուրաքանչյուր հրամանատար և կարմիր բանակային կրակի գերազանց»: Ինքն ընկեր Վորոշիլովը ցույց է տալիս գերազանց հրաձգության որինակներ:

«Կրակել Վորոշիլովի պես»— ահա հրաձգային գործի ենտուղիաստների լողունզը Կարմիր բանակում և ամբողջ յերկրում:

Կարմիր բանակում որեցոր աճում են հրաձգային արվեստի վարպետ՝ զերազանցիկների շարքերը:

Ներկայումս մեր բանակը, այն սքանչելի հաղթանակների հետեւանքով, վոր յերկիրը ձեռք ե բերել առաջին ու յերկրորդ հնդամյակների տարիներին, առաջնակարգ այլ տեխնիկական միջոցների հետ միասին ստացավ նաև հզոր հրաձգային գենք: Այդ գենքը վոչ մի կերպ համեմատել չի կարելի այն գենքի հետ, վոր մենք ունեյինք քաղաքացիական պատերազմի տարիներին: Մեր հրաձգային գենքն իր վորակով յետ չի մնում, իսկ յերբեմն նաև գերազանցում է ոտարերկրյա բանակների գենքի լավագույն տիպարներից:


Յուրաքանչյուր մարտիկի պատվո գործն ե կատարեալապես ուսումնասիրել, խնամել, միտք բարձր մարտնակ դրության մեջ պահել յեվ մարտում լավ գործադրել մեր հզոր առաջնակարգ ուզմական տեխնիկան, յեվ այդ բվում նայեվ երաձգային գենքը:

ԳՆԴԱԿ ՅԵՎ ՓԱՄՓՈՒՇՏ

Յուրաքանչյուր հրաձգային զենքի գործողությունը կախված է տրամաչափից (կալիբրից), այսինքն՝ փողանցքի հակադիր առերլի միջև յեղած լայնությունից: Վորքան ավելի խոշոր և զենքի տրամաչափը, այնքան ավելի խոշոր ու ծանր գնդակ (արկ) կարող է նա նետել:


Մեր հրացանն ու գնդացիրն ունեն 7,62 միլիմետր (3 դիմ) տրամաչափ, վորը հնարավորություն և տալիս նրանցից կրակելու՝ կենդանի նշանների համար բավականաչափ խոշոր գնդակով:

Հրացանի ու գնդացրի գնդակը (նկար 1) բաղկացած




Նկար 1. Փամփուշտներ ու գնդակներ: Ձախ կողմում՝ սովորական գնդակով փամփուշտ, կենտրոնում և աջ կողմում՝ հատուկ նշանակում (դեր) ունեցող գնդակներ և ատրճանակի ու պիստոլետի փամփուշտներ:

և միջուկից (կապարի ու ծարիբի ձուլվածք) և պարուտակից (շապկից) (յերեսապատած յերկաթից): Փամփութեաը բաղկացած է զնդակից և պարկունից՝ անծուխ վառողի լիցի հետ: Սովորական զնդակով փամփուշտը (1908 թ. տիպարի) կշռում է 22,5 գրամ, իսկ ծանր զնդակով փամփուշտը (1930 թ. տիպարի) կշռում է 24,5 գրամ:



Նկար 2 ա. Զնդակի ծակելու ներգործությունը: Յերբ արգելքն այն հաստությունն ունի, վոր ցույց է տրված նկարում (սանտիմետրերով), զնդակը չի ծակում այն, ինչ հեռավորությունից ել արձակված լինի:

Գնդակն ունի ծակելու մեծ ներգործություն։ Այդ պետք ե մշտապես հաշվի առնել՝ կրակից տեղական առարկաների հետևում ծածկվելիս (խրամատներ փորելով) և զանազան ծածկված նշաններ գնդակոծելիս (նըկար 2 ա և 2 բ)։ Յերբ նշանը ծածկված և գնդակից չժակվող արգելքով, պարզ ե, վոր իմաստ չունի այդպիսի նշանին կրակելը։



Նկար օր. Գնդակի ծակելու ներգործությունը։ Այն հասության դեպքում, վոր ցույց ե տրված նկարում (սանտիմետրերով), գնդակը չի ծակում արգելքը, ինչ հեռավորությունից ել նա արձակված լինի։

Բայց սովորական զնդակը չի կարող ծակել ժամանակակից տանկերի ու զբահապատ ավատմորիլների զբահը մինչև անդամ ամենամոտ հեռավորություններից: Միայն դիպուկ ձիգի դեպքում կարելի յէ հարվածել տանկն սպասարկող անձնակազմին բաց դիտաձեղքից: Դնդակը ճեղքին մոտիկ դիպչելիս, հալած կապարի (արճճի) կաթիլները կարող են անցնել ճեղքից և վիրավորել անձնակազմին: Այդ պատճառով զբահով պատած նշաններն ավելի հուսալի հարվածելու համար,— որինակ՝ պողպատե վահանների հետեւմ գտընվող դիտողներին, տանկերի և զբոհային սավառնակների անձնակազմին հարվածելու համար,— զբահահար զնդակներ են զործադրում:

Զբահահար զնդակը (նկար 1) պատրաստվում է պողպատից և կարող ե ծակել մինչև 7 միլիմետր հաստությամբ զբահ, յերբ կրակում են վոչ ավելի քան 400 մետր հեռավորությունից: Սովորական զնդակից տարբերելու համար զբահահար զնդակի զլիսիկը ներկում են սովորաբար սև գույնի:

Բացի զբահահար զնդակներից, կան հատուկ ծրագըծող գնդակներ (նկար 1), վորոնք թռչելիս թողնում են (մինչև 1200 մետր հեռավորության վրա) լուսավոր կամ ծխային հետք: Այդ զնդակներն սպազործում են գիշերով կատարած փորձնական հրաձգության ժամանակ, ինչպես նաև սավառնակների դեմ կրակելիս, վորովհետեւ լուսավոր կամ ծխային հետքը հնարավորություն ե տալիս հեշտությամբ տեսնելու, թե ճիշտ ե արդյոք ուղղած զենքը նպատակին: Ծրագծող զնդակի զլիսիկը սովորաբար ներկվում ե կանաչ գույնի:

Յերեկով փորձնական հրաձգություն կատարելու հա-

մար ծառայում ե հատուկ Փորձնական իրականության
գնդակը: Յերբ այդ գնդակը դիպչում ե արդելքի, դո-
յանում ե ծխի լավ տեսակի ամպ, վորով կարելի յե-
ղատել, թե ճիշտ են արդյոք վարում կրակը: Փորձնա-
կան հրածդության գնդակի գլխիկը սովորաբար ներկ-
վում ե սպիտակ գույնի:

Վերջապես՝ կան հրգեհիչ (հրձիգ) գնդակներ (նկար 1),
վորոնք գործադրվում են հրդեհելու համար աների կը-
տուրները, խոտի գեղերը և այլն: Հրդեհիչ գնդակը մեծ
հաջողությամբ սպազործվում է նույնպես կապովի
աերոստատների ու դիրիժաբլների գեմ կրակելու հա-
մար, վորոնք սովորաբար լցված են լինում բոցավառ-
վող գաղով, ինչպես նաև սավառնակների գեմ, վորոնց
վրա միշտ լինում ե հեշտությամբ բոցավառվող բեն-
զինի պաշար: Հրդեհիչ գնդակի գլխիկը ներկվում ե
կարմիր գույնի:

1895 թ. տիպարի առենանակի և 1930 թ. տիպարի
պիսուլեսի փամփուշտներն ունեն նույն տբամաչափը
(կալիբրը) և մոտավորապես նույն կազմությունը, ինչ
վոր ունեն հրացանի փամփուշտները (նկար 1), բայց
ատրճանակի գնդակը գտնվում է պարկուճի ներսում:

Մարտում կրակային հաջողություն ձեռք բերելու
համար հարկավոր ե լինում շտապ կրակ տեղալ, հե-
տեապես՝ հարկավոր ե լինում ծախսել մեծ քանակու-
թյամբ փամփուշտ: Մինչդեռ փամփուշտների փոխադ-
րությունը, վոր կատարում են վազող — փամփշտա-
կիրները կրակի տակ, միշտ ել դժվար ե, իսկ վորոշ
մոմենտներին մինչև իսկ անհնարին ե: Այդ պատճառով
փամփուշտները միշտ պետք ե ծախսել մեծ խնայո-
ղությամբ՝ վտանգի բոպեյին անպաշտպան չմնալու

համար: Լավ հրաձիգը մինչև 300 մետր հեռավորության
վրա մեկ գնդակով հարվածում ե ամեն տեսակ առան-
ձին նշաններ՝ սկսած զլխաչափ կերպարանից:

Խնայողաբար ու ժատությամբ ծախսելով փամ-
փուշաները, հոգ տանելով մարտաղաշտում նրանց պա-
շարը լրացնելու մասին, հրաձիգներն ու գնդացրորդ-
ներն, իհարկե, չպետք ե փամփուշտ խնայեն այն մո-
մենտներին, յերբ ճարկավոր ե հակառակորդին վճռա-
կան հարված հասցնել:

Հ Ա Ր Ց Ե Բ

1. Հրաձգային ինչպիսի՞ գենքն ե կոչվում թեթև,
2. Ինչի՞ համար ե ծառայում հրաձգային գենքը հարձակման և
պաշտպանության ժամանակ:
3. Ջենքի տրամաչափի դերն ի՞նչ ե:
4. Ի՞նչպիսի՞ նշաններ կարելի յե հարվածել գնդակով:
5. Կծակի՞ արդյոք սովորական գնդակը 1 մետր հաստությամբ
սեահողի թումբը:
6. Ի՞նչ հաստության պետք ե լինի աղյուսե պատը, վորպեսզի
այն չկարողանան ծակել գնդակները:
7. Ի՞նչի՞ համար են զործազրկում զրահահար գնդակները և ի՞ն-
չո՞յ են նրանք տարբերվում սովորական գնդակներից:
8. Ի՞նչ գեղքերում պետք ե կրակել ծրագծող գնդակ:
9. Սավառնակի վնր մասին և ի՞նչ գնդակ պետք ե դիպցնել՝ սա-
վառնակի վրա հրդեհ առաջացնելու համար:

ՀՐԱՑԱՆ

Թեև հետեւակն ու հեծելազորն ունեն բազմազան, և այդ թվում նաև ավտոմատիկ զենք, այնուամենայնիվ հրացանը լիովին պահպանում է իր նշանակությունը, վորպես մոռակա մարտի զենք, վորպես անհատ մարտիկ զենք և առաջվա պես մնում է հետեւակային զենքի հիմնական տեսակը:

Հրացանը ծառայում է հակառակորդի կենդանի ուժը հարվածելու համար: Նա ունի գործողության նշանուցային բավական մեծ հեռահասություն — մինչև 2000 մետր և ունի գնդակ (1908 թ. տիպարի), վորը պահպանում է իր ծակող ուժը մինչև վերջնական հեռավորության, այսինքն՝ մինչև 3 կիլոմետրի վրա: Հրացանի գլխավոր առավելություններից մեկն այն ե, վոր նրանով կարելի յե մարտ մղել ամենուրեք, ուր կարող են լինել առանձին մարդիկ:

Հրացանը կարող ե փոքր հեռավորությունների վրա հարվածել մարտադաշտի բոլոր կարևորագույն նշանները: Պարզ ե, վոր դրա համար ամենից առաջ գնդակը պետք ե դիպչի նշանին: Հմուտ ձեռքերում հրացանն ունի մեծ գիպուկություն:

Այդ բոլորը հրացանը դարձնում են կրակային մարտի հզոր միջոց, յերբ զորքերը ձգտում են քայքայելու հակառակորդի շարքերը և նրան ուժեղ կորուստ հասցնելու, վորպեսզի այնուհետև վերջնականապես ջախչախեն բռնամարտում:

Բայց բռնամարտը սկսվելուց հետո նույնպես հրաշանը չի կորցնում իր նշանակությունը: Սփիճի ու կոթի շնորհիվ նա ունի սրազենի բոլոր հատկությունները և այդ պատճառով ծառայում է հետեվակի բռնամարտի համար հիմնական գենե:

Ինչպես ցույց տվին իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմները, հրացանը կռվի գործոն միջոց և նաև ցածր թուչող սավառնակների դեմ և հնարավորություն ե տալիս կռվելու հակառակորդի զրահապատ ավտոմոբիլների և տանկերի դեմ:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԳՈՐԾՈՒՄ ՀՐԱՑԱՆԸ

A/16006
Ժամանակակից 1891/1930 թ. թ. Տիպարի հրացանը պարզ է իր կազմությամբ (նկար 3), բավականաչափ թեթև և (սվինի հետ միասին նրա քաշն է մոտ $4\frac{1}{2}$ կիլոգրամ), հարմար է կրելու համար, ամուր և և միշտ պատրաստ և գործելու:

Մեր հրացանը հինգ — լցային է: Նա ունի պահեստատուփ (նկար 3 և 4), վորի մեջ գետեղվում և 4 փամփուշտ (հինգերորդ փամփուշտը զանվում է փամփըշտանոցում): Այդ փամփուշտները յուրաքանչյուր ձկովից հետո փակաղակը բանալուց առաջ հատուկ զսպանակի միջոցով շարժվում են դեպի վեր, իսկ փակաղակը փակելուց հետո փակաղակի միջոցով շարժվում են փողի մեջ: Փակաղակը բանալիս միաժամանակ դուրս է նետվում կրակած պարկուճը: Այդպիսի կազմությունը հընարավորություն և տալիս փորձված հրաձգին հրացանով մեկ րոպեյում կատարելու 10-12 նշանոցային ձիգ: Դերազանց հրաձիգները հրացանով կատարում են 14-16



Նշանոցային ձիգ և 250-300 մետր հեռավորության վրա
հարվածում են 11-13 գլխաչափ կերպարան:

Հրացանի հսկայական արժեքը հանդիսանում է նրա
կրակի գետնամերձությունը: Այդ գետնամերձությունն
այնպես է, վոր մինչև 400 մետր հեռավորությամբ կը-
րակելիս դնդակն իր թոփչքի ամրող ճանապարհին
(հետազծի վրա) հարվածում է պառկած նշանը, իսկ



Նկար 3. Հրացանի ընդհանուր տեսքը և նըանով կատարվող
հրաձգությունը:


մինչև 700 մետր հեռավորությամբ կրակելիս հարվա-
ծում է հասակաչափ նշանը (Նկար 5): Վորովինեան
հրացանը ծառայում է փոքր հեռավորությունների վրա
մզկող հրամարտի համար, այդ գետնամերձությունն
ունի հատուկ նշանակություն. մեծ գետնամերձության
հետեանքով՝ ավելանում է այսպես կոչվող հարվածելի
տարածությունը (Նկար 5): Սակայն մյուս կողմից հե-
տազծի այդ գետնամերձությունը հնարավորություն է
տալիս համեմատաբար հեշտ ձեռվ ծածկվելու գըն-
դակներից տեղանքի մինչև անդամ փոքր խորշերում,
առանց վտանգելու ծածկված նշանները՝ խրամատնե-
րում, ձորերում, բլրակների հետեւմ ծածկված մար-
տիկներին (Նկար 5):

Հրացանի այդ հատկությունը պետք է միշտ հաշվի

առնել թե հրացանը զործադրելիս և թե հակառակորդի
հրացանային կրակից պաշտպանվելիս:

ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՅԱՆՈՎ

Հրացանով վորեն նշանին արձակած զնդակները չեն
դիպչում միենույն կետին, այլ ցրվում են ճակատով
ու խորությամբ: Այդպիսով մի շաբք ձիգեր կարծես
խուրձ են կազմում: Որինակ՝ յերբ մի խումբ հրաձիգ-
ներ նշանին կրակում են 400 մետրից, ձիգերի խրձի
միջուկը հասնում է միջին հաշվով ըստ խորության
200 մետրի և ըստ ճակատի՝ 2 մետրի: Այդ ցրումը հա-




Նկար 4. Հրացանի կազմությունը:

մեմատաբար մեծ է, բայց գերազանց հրաձիգի համար
300 մետր հեռավորության վրա, մեկական ձիգերով
կրակելիս, բավական և շամփուշ՝ գլխաչափ թի-

բախը հարվածելու և 1 փամփուշտ՝ կրծքաչափի թիրախը հարվածելու համար:

Յերբ նշանը հեռու յե գտնվում և վատ և յերեսում, իհարկե, դժվար է հարվածել այն: Բայց մոտիկ հեռավորությունների վրա (մինչև 400 մետր) հանգիստ ու դիպուկ հրածիզը կարող է հարվածել յուրաքանչյուր մարտական նշան, մինչև անգամ, յերբ նա հայտնվում է կարճ ժամանակով: Այդ պատճառով հրացանային կրակն ամենից ավելի ձեռնուր յե գործադրել մոտ տարածությունների վրա՝ հակառակորդի մարտիկներին հարվածելու համար, յերբ նրանք դուրս են ցցվում:



Նկար 5. Հարվածելի և զոչ-հարվածելի (մեռյալ) տարածությունը՝ 1908 թ. տիպարի գնդակով հրացանը զանազան հեռավորությամբ կրակելու դեպքում: Մեռյալ տարածությունը ստվերագծված է շեղ գծիկներով: Ներքեւում ցույց է տրված, թե ինչպես և վոխվում մեռյալ տարածության սեծությունը զանազան հեռավորություններից կրակելու դեպքում:

ծածկաբաններից, կամ բարձրանում են վազեվազքի հումար և այդ պատճառով յերեսում են փոքրիշատե պարզուց ձևով:


Հրացանով հրաձգություն անում են ամենից առաջ կարևորագույն նշանների գեմ, այսինքն՝ այնպիսի նըշանների, վորոնք ամենից ավելի վտանգավոր են կամ խոչընդուռ են հանդիսանում մարտական խնդրի կատարմանը:

Մենագարկ (հատ-հատ) կրակելը ձեռնուու յե այնպիսի նշանների գեմ, վորոնց կարելի յե հարվածել արագ ու հեշտ կերպով, այսինքն ամենից առաջ բաց, լավ դիտվող նշանների գեմ: Բայց վորովհետեւ ժամանակակից մաքտում բաց ե լավ դիտվող նշաններ սակավ գեպքերում կպատահեն, ուստի մարտիկները պետք ե կարողանան դիպուկ հարվածել այն նշանները, վորոնք հայտնվում են կարճ ժամանակով (3—5 վայրկյանով), ինչպես նաև պետք ե կարողանան կրակել քողարկների հետեւում թաղնված, հաճախ լայն նշանների գեմ: Այս գեպքում կրակելը պետք ե վարել անմիջականորեն քողարկների գեմ. և այն հաշվով, վոր քողարկի լայնության յուրաքանչյուր 0,5 մետր լայնությանն ընկնի 1 զնդակ. այսպիսի գեպքում, վորտեղ ել նշանը դանվելիս լինի, քողարկի հետեւում նա կհարվածելի:

Հրացանային կրակը հաջողությամբ գործադրվում ե նաև բավականաշափ (մինչև 1000 մետր) հետեւ դարձվող և թույլ տեսանելի ու քողարկված խոշոր (խմբակային) նշանների գեմ: Այդպիսի նշանների հարվածումը, վորը սակավ մատչելի յե առանձին հրաձգի համար, միանգամայն հնարավոր ե՝ հրամանատարի կողմից գե-

կավարվող հրացանաձիգների խմբակի կենտրոնացված
կրակով:

Լավագույն, հատուկ պատրաստված հրաձիգները —
սեայպերները, ոպտիկական նշանոցներ ունեցող ըն-
տիր հրացաններով (նկար 6) զինված, կարող են ինք-
նուրույն կրակել 500 մետր հեռավորությունից, հար-
վածելով դիպուկ ձիգերով ամենից կարելոր նշանները
(հրամանատարներ, գնդացրորդներ, դիտողներ, կապա-
վորներ): Ոպտիկական նշանոցի միջոցով կարելի յի
կրակ գործադրել մանր նշանների զեմ.— զլուխ, զլխի
մի մաս, հրակնատ, ինչպես նաև այնպիսի նշանների



Նկար 6. Հրաձգությունն ոպտիկական նշանոց ունեցող հրացա-
նով: Սեայպերի կողքին գտնվում է դիտողը:

վեմ, վորոնք լավ են քողարկված, վատ են յերեսւմ և
զգալի չափով հեռու յեն գտնվում:

Թպտիկական Յօանոցը բաղկացած է փողակից, վորի
մեջ կան հատուկ (ոպտիկական) ապակիներ և նշանու-
ցային հարմարանք: Ապակիների շնորհիվ նշանոցն ա-
վելացնում է դիտվող նշանի տեսանելիությունը և այդ
պատճառով հնարավորություն և տալիս ճշտորեն նշան
բռնելու և դիտելու մինչև անզամ մթնշաղին և լուս-
նյակի լույսով:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչի՞ համար ե հրացանի պահեստատուֆը և ինչքան փամ-
փուշտ ե զետեղվում նրա մեջ:
2. Վորոնք են հրացանի կրակի գետնամերձության դրական ու
բացասական հատկությունները:
3. Կարելի՞ յե արդյոք հրացանով հարվածել այն նշանը, վոր ծածկ-
ված ե խրամատում:
4. Ինչպիսի՞ հետավորության վրա կարող ե լավ հրածիգը հրա-
ցանով հարվածել ամեն չափի բաց կենդանի նշանը:
5. Ինչպիս պետք ե կրակել լայն քողարկների հետեւմ թագըն-
ված նշանների դեմ:
6. Ցեղը ե գործադրվում կենտրոնացված կրակը հրացանով:
7. Ինչով ե տարբերվում սնայպերական հրացանը սովորական
հրացանից:
8. Ինչպիսի՞ նշանների դեմ պետք ե տմենից առաջ կրակեն սնայ-
պերները:

ԶԵՐՔԻ ԳՆԴԱՑԻՐ

Ժամանակակից մարտադաշտում նշանները հայտընվում են արագ և նույնքան արագ թագնվում: Հարվածելու համար այնպիսի նշաններ, ինչպիսիք են՝ հակառակորդի ծածկաբանից ծածկաբան վաղվզող մարտիկները, կամ հետեւակի զրոհի վաղող ջոկը, հարկավոր ե վոչ միայն արագ նշան բոնել, այլև արձակել վորքան կարելի յե շատ գնդակ: Այդ անհրաժեշտ և նույնպես հարվածելու համար լավ քողարկված ու խրամատավորված կրակային կետը, կամ հակառակորդի ցածրացած, բայց չափազանց արագ թուչող սավառնակը:


Այդ զեպքերում, բացի հրացանից, ձեռնառու յե ունենալ արագածիդ ավտոմատիկ հրացանային զենք: Այդպիսի զենքը պետք է ունենա կրակային մեծ հզորություն, վորպեսզի անհրաժեշտության զեպքում ոգնություն ցույց տա հետեւակին: Նա պետք է լինի գյուրաշարժ, վորպեսզի ամենուրեք ուղեկցի հետեւակին և անմիջականորեն մասնակցի նրա մարտին: Այդպիսի զենք է հանգիստանում պմենից առաջ ձեռքի գնդացիրը:

ԶԵՐՔԻ ԳՆԴԱՑՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարմիր բանակի սպառազինության մեջ գտնվում ե Գեգտյառեվի սիսեմի ձեռքի գնդացիրը (նկար 7): Հրացանում վառողի լիցն ոգտագործվում է միայն

գնդակը փողանցքից դուրս նետելու համար: Զեռքի գնդացը հիմնական առանձնահատկությունն այն է, վոր հատուկ հարմարանքների միջոցով վառողի գաղերն ուղարկում են ավտոմատիկ հրաձգության համար, այսինքն զնդացիրը վերալցնելու յեզ եռ ծիգ կատարելու համար: Այդ հրաձգությունը կատարվում է հետեւյալ ձեռվ:

Զգանը սեղմելիս (նկար 8) դարկանը ջարդում է փամփշտի հրապատիճը: Տեղի յեւնենում ձիգ: Յերբ փողանցքով շարժվող գնդակն անցնում է փողի հատուկ գաղափին անցքից (նկար 8), վառողային գաղերի մի



Նկար 7. Դեգտյարեկի ձեռքի գնդացը ընդհանուր տեսքը:

մասը, վոր գալիս են գնդակի հետեւյց, ձեղքում - անցնում են այդ անցքից զեպի գաղախուցը (նկար 8) և հրում են գաղամխոցը: Այդ գաղեցի ճնշման տակ մխոցը յետ է տրվում, սեղմում եւ հետադարձ զսպանակը և յետին զրության մեջ է դնում փակաղակային օրգանակը փակաղակի հետ միասին (նկար 1):

Յետ շարժվելիս փակաղուկը հափոռում և փամփշտանուցից կրակած պարկուճը:

Հենց վոր վերջանում եւ վասողային զազերի ներդորածությունը, հետագարձ զսպանակը բացվում եւ և ստիպում ե, վոր իրենց տեղը վերադառնան դադամխոցը, փակաղակային շրջանակը և փակաղակը: Միենաւյն ժամանակ փակաղակը բռնում եւ պահեստարանի ընդունարանից (Նկար 8) մի նոր փամփուշտ, իսկ փակաղակային շրջանակի հետ միասին շարժվող զարկանը ջարդում եւ փամփշտի հրապատիճը, վորից առաջանում եւ հաջորդ ձիգը: Ձիգից հետո նորից կրկնվում եւ զնդացը բոլոր մեխանիզմների գործողությունը: Այսպիսով հրաձգությունը շարունակվում եւ այնքան ժամանակ, քանի զեռ սեղմված եւ ձգանը և քանի զեռ փամփուշտներ կան պահեստարանում:

Վորովիհետև զնդացիը ծառայում եւ արագ հրաձգության համար, նրա փողը հրաձգության ժամանակ կարող եւ անհամեմատ ավելի ուժեղ տաքանալ, քան թե հրացանի փողը: Այդ պատճառով զնդացը փողն ավելի ծանր եւ և ունի կողավոր մակերես՝ ուսղիատօր, վորը նպաստում եւ նրա արագ պաղեցմանն ողում (Նկար 8):


Զեռի զնդացը մի այլ չափազանց կարևոր տարբերությունը հանդիսանում եւ նրա պահեստարանը, վորը բաղկացած եւ յերկու սկավառակներից (վերին ու ստորին): Պահեստարանում զետեղվում եւ 49 փամփուշտ (Նկար 10):

Հրացանի պահեստարանը պետք եւ վերալցնել յուրաքանչյուր 5 ձիգից հետո, իսկ ձեռքի զնդացը սկավառակը հնարավորություն եւ տալիս արագ արձակելու 49 զնդակ: Իսկ ընդամենը ձեռքի զնդացը մեկ բոպե-


յում կարելի յե արձակել 100—
125 գնդակ, այսինքն՝ 2-3 սկա-
վառակ:

Գնդացիրը կշռում և մի քիչ
ավելի, քան հրացանը. Դեպ-
այարելի ձեռքի գնդացիրը նե-
ցուկի (վորի վրա նա հաստ-
վում է հրածզության ժամա-
նակ) և բոցամարիչի հետ մի-
ասին (նկար 10) կշռում և մոտ
10,5 կիլոգրամ: Բայց իր ար-
տաքին կազմությամբ և հրա-
ծզության յեղանակներով
գնդացիրը նման է հրացանին և
մարտում կարող է տեղափոխ-
վել և սպասարկվել մինչև ան-
գամ մեկ մարտիկի կողմից:
Սակայն նրա ավելի բարդ կազ-
մությունը, համեմատաբար մեծ
քաշը և, վոր զլիսավորն և,
փամփուշտների մեծ ծախքը
(արագածզության հետևան-
քով) գժվարացնում ևն մար-
տական սպարագյում մի հո-
գով նրան սպասարկելը. այդ
պատճառով ձեռքի գնդացիրը
գտնվում է մարտիկների մի
ամբողջ խմբի (հրածային ջո-
կի) սպառազինության շար-
քում:


Այսպիսով ձեռքի գնդացիրը



8. Դեպայարելի գնդության կառաջի պահպանաձնակներ




Ձիգից Արևո ԺՈՂՈՎ ՓԱԿԵ. ԶՍՊԱՆԱԿԸ ԹՅՈՒԱՑՎԱԾ



ՁԻԳԻՑ ՀԵՏՈ ԳԱԶԵՐԸ ՅԵՏ ԵՆ ԽԵՏԵԼ ՄԽՈՅՑՆ ՈՒ ՓԱՇԱՆԱԿԸ
ՅԵՎ ՄԵՇՄԵԼ ԵՆ ՀԵՏԱԴԱՐՁ ԶՄՈՎԱՄԿՅԸ

Նկար 9. Դեգտյարեկի ձեռքի գնդացըրի աշխատանքի սխեման:



ԸՆԴԱՎԱՐՄԻԸ (ԲԵՐՆԱԿԱԸ)

Նկար 10. Դեգտյարեկի ձեռքի գնդացըրի պահեստարանն ու բացամարելչը:

հանդիսանում ե խմբակային զենք և տարրերվում ե
հրացանից իր ավտոմատիկ գործողությամբ: Բայց ներ-
կայումս արդեն հանդես ե յեկել նաև անձնական ավ-
տոմատիկ զենք՝ պիստոլետ՝ զնդացիրներ և ավտոմա-
տիկ ու կիսաավտոմատիկ (ինքնալից) հրացաններ:

Պիստոլետ՝ զնդացիրն իր արտաքին տեսքով նման
է պիստոլետին, ունի պահեստարան և կրակում ե ավ-
տոմատիկ կրակով ատրճանակի փամփուշաներ: Իր
ուժինությամբ, զիպուկությամբ և գործողության հե-
ռահասությամբ նա զգալի չափով յետ ե մնում ձեռքի
զնդացրից և այդ պատճառով առավելապես գործազըլ-
վում ե վորպես անմիջական ինքնապաշտպանության
զենք զնդացրային մասերում և հրետապորում:

Սվետոմատիկ հրացանը կազմված է ձեռքի զնդացրի
նման: Նրա մեջ նույնպես վառողային զագերի ուժով
վոչ միայն դուրս և մզգում զնդակը, այլ և կատար-
վում ե վերալցումը և նոր ձիգը: Սակայն ավտոմատիկ
հրացանն ունի պահեստարան՝ ավելի պակաս թվով
փամփուշաներով, նրա արագածզությունն ավելի պա-
կաս ե և նա կըում ե համարյա նույնքան, վորքան
սովորական հրացանը:

Կիսաավտոմատիկ (ինքնալից) հրացանը տարրերվում
է նրանով, վոր նրա մեջ ավտոմատիկ ձեռվ կատար-
վում է միայն վերալցումը, իսկ յուրաքանչյուր նոր
ձիգի համար կրկին պետք է սեղմել ձգանը:

Ավտոմատիկ և կիսաավտոմատիկ հրացաններն ան-
կառած ուժեղացնում են հետեւակի կրակային կորովը:

Հասկանալի յե վոր այդպիսի հրացաններով հրա-
ձըզությունը մեծ չափով նման կլինի ձեռքի զնդացրով
կատարած հրաձզությանը:

Այդ գենքից անհրաժեշտ քանակությամբ ունի նաև
մեր Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակը: Պաշտ-
պանության ժողովրդական կոմիսար Խորհրդային Մի-
ության մարզական ընկեր Վորոշիլովը դեռևս իր՝ «Կարմիր
բանակի 15 տարին» զեկուցման մեջ ասում եր, վոր
«մենք պետք ենք բարելավելինք սպառագինության մեջ
գոյություն ունեցող մեր Յ-գծանի հրացանը: Բայց վոչ
միայն բարելավելինք. նախընթաց պատերազմների
փորձը պահանջում է անցնել ինքնալից երացանի, պա-
հանջում են ավտոմատիկ երացան: Այժմ մենք այդ նոր
տիպի հրացաններն ունենք...»:

ՀՐԱԶԴՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔԻ ԳՆԴԱՑՐՈՎ

Զեռքի գնդացրով կատարած առանձին ձիգի զիպու-
կությունը նույնն է, ինչ վոր հրացանով կատարած
ձիգի զիպուկությունը, սակայն ավտոմատիկ հրաձը-
գության ժամանակ գնդացրի նախնական նշանառու-
թյունը յուրաքանչյուր ձիգից հետո փոքր ինչ փոխ-
վում է, և այդ պատճառով գնդակները ցըլում են ա-
վելի լայն խուրձով, քան թե հրացանով կատարած
հրաձգության ժամանակը: Այլ կերպ ասած՝ գնդացրի
մոտ ցրումն ավտոմատիկ հրաձգության ժամանակ ա-
վելի մեծ է, քան թե հրացանի մոտ:

Սակայն ցրման այդպիսի ավելացումը վոչ մի կերպ
չի նվազեցնում ձեռքի գնդացրի մարտական նշանա-
կությունը, այլ շատ զետքերում մինչև անդամ ավելի
ձեռնտու յե, որինակ՝ յերբ այնքան ել ձիշտ չի վորոշ-
ված մինչև նշանը յեղած հեռավորությունը, կամ յերբ
կրակում են փոքր տարածության վրա ցըլած խմբա-
կային նշանի գեմ:

Վորապեսզի ձեռքի գնդացըով արձակած գնդակների խուրձը շատ լայն չլինի, սովորաբար կրակում են նորմալ հերթերով, յուրաքանչյուրում 4—6 ավտոմատիկ ձիգ՝ և յուրաքանչյուր ձիգից հետո կանգ են առնում՝ նշանառությունը վերականգնելու համար: Այդպիսի հրածարգությամբ ձեռքի գնդացըով կարելի յե կատարել մեկ քողեյում 100—125 ձիգ, ըստ վորում գնդացըի կրակը բավականաշափ դիպուկ եւ և գործոն մինչեւ 1000 մետր հեռավորության վրա: Այդ հեռավորությունից ել կրակում են ձեռքի գնդացըով խմբակային թե բաց և թե քողարկված կամ տեղանքի փոքր ծալքերում ծածկված նշանների դեմ:

Կարճ հերթերով կրակը՝ յուրաքանչյուր 2—3 ավտոմատիկ ձիգից հետո ընդմիջումներով վարում են այն ժամանակ, յերբ նշանը կարելի յե հարգածել ավելի փոքր թվով ձիգերով, քան թե փորձնական հրածգության ժամանակ:

Անընդհատ կամ 8—12 ձիգից բազկացած յերկար հերթերով կրակը վարում են բացառիկ դեպքերում, որին չկա չկա մի այլ միջոց հակառակորդի մոտակա հարձակումը յետ մղելու համար, կամ յերբ հարկավոր ե ավարտել նրա ջախջախումը:

Մենազարկ ձիգերով իրականացնելը ձեռքի գնդացիներով, ինչպես և հրացանով, կատարում են այն զեպքերում, յերբ հարկավոր ե հակառակորդից թագունել գնդացըի ներկայությունն ու դասավորության տեղը, ինչպես նաև մոտ հեռավորություններից ամենամանը նշանների դեմ կատարած հրածգության ժամանակ:

Իր ուժգին (արագաձիգ) կրակով ձեռքի գնդացիը

կովում ե հակառակորդի գնդացըրային ու հրաձգային
խմբակների դեմ: Նա ճնշում է նրանց կրակը, վորպես-
զի հնարավորություն տա իր հրաձիգներին առաջ շարժ-
վելու հարձակման ժամանակ, կամ քայլայում, կա-
սեցնում ե կանգնեցնում ե հակառակորդի խմբակների
առաջխաղցումը և յետ ե մղում նրանց հարձակումը
պատճանության ժամանակ:

Զեռքի գնդացըրով կարելի յե կրակել վոչ միայն կեն-
դանի նշանների դեմ, այլև տանկերի ու սավառնակ-
ների դեմ: Սավառնակների դեմ հրաձգություն անելու
ժամանակ գնդացիրը հենում են վորեւ հենարանի՝
ցանկապատի, թմբի կամ տախտակի վրա (նկար 11):


Ժամանակակից պատերազմում շատ հաճախ հարկա-
վոր ե լինում կրակել գիշերային մքության և ծխի
մեջ: Զեռքի գնդացըրով կրակը կարող է միանգամայն
հաջող լինել այդ պայմաններում, յեթե այդ նախա-
պատըստվի վաղորոք: Իսկ վորովհետեւ հակառակորդը
կարող ե անակնկալ կերպով ծխածածկույթ գործադրել,
ուստի այդպիսի պատըստությունը պարագիր ե:

Գիշերային հրաձգության նախապատըստումը կա-
տարվում է մոտավորապես հետեւյալ ձևով: Գնդացիրը
լավ ամրացված նեցուկի վրա (նեցուկը պետք ե լինի
հատուկ փայտե տակակալի վրա) նշան են բռնում
ընտրված կետին: Նշած դնագծին կամ կետին նշանոցի
համապատասխան հաստումից հետո՝ գնդացըրի կոթի
տակ ամուր խփում են փայտե խեչմայր կամ դնում
են մի կարճ կտոր տախտակ (տախտակը դնում են կող-
քի վրա գեանին և ամրացնում են ցցերով): Տախտա-
կի վերին կողի վրա պատըստում են կարվածք՝ գըն-
դացըրի կոթի համար, նշանառության համեմատ:

Այդ ձեռվ հաստված
գնդացըով կարելի յէ
կրակել զիշերով՝ մինչև
անդամ առանց հակա-
ռակորդին տեսնելու.
բնագծերով կամ մա-
տույցներով վաղորոք
նշանադրած գնդացըի
կրակը կստեղծի ուժեղ
խոչընդուա և կստիպի
հակառակորդին լուրջ
կորուստներ կրել:

Նրանգությունը ծխի
մեջ անելու կարիք ե
լինում միայն պաշտ-
պանողական մարտում,
յերբ հարձակվող հա-
կառակորդը, կամնա-
լով կնորացնել պաշտ-
պանության կրակա-
յին կետերը և թուլաց-
նել պաշտպանության
կրակը, ստեղծում ե
խիտ ծխածածկութ կամ անմիջականորեն կրակային
կետերի առաջ կամ պաշտպանվողի դասավորության
մեջ: Այդ դեպքում գնդացիրները պատրաստվում են
հրաձության նույն ձևով, ինչ վոր զիշերը կատարած
հրաձության ժամանակ:

Նրանգությունը ծխի միջից հարկավոր ե լինում
վարել թե պաշտպանողական և թե հարձակողական մար-



Նկար 11. Ինչպես պետք ե հար-
մարեցնել Դեգոյարեկի ձեռքի գըն-
դացիրը սավանակների գեմ կրա-
կելու համար:

Կրակային կետերի առաջ կամ պաշտպանվողի դասավորության
մեջ կատարած հրաձության նույն ձևով, ինչ վոր զիշերը կատարած
հրաձության ժամանակ:

Նրանգությունը ծխի միջից հարկավոր ե լինում
վարել թե պաշտպանողական և թե հարձակողական մար-

տում: Յերբ ծխածածկույթը ստեղծվում է հակառակորդի հարձակվող խմբակների շարժման ճանապարհին և նրա կրակային կետերը կուրացնելու համար, ինչպես նաև յերբ հարձակվողը ծխածածկույթ է ստեղծում իր զորամասերի առջեռում՝ նրանց քողարկելու համար, հրաձգությունը կատարվում է նեանառության ոժանդակ կետերի ողնությամբ, ինչպես հրաձգությունը ծածկված նշանների գեմ, կամ կիսածածկ գիրքերից: Նշանառության ոժանդակ կետերն ավելի շահավետ ե ընտրել զնդացրի մոտերքում և ըստ հնարավորության նշանի տակ: Այդպես լավ պատրաստված կրակը խոշոր կորուստ կպատճառի հակառակորդին:

Զեռքի զնդացիրը գործում է հրաձգային ջոկի կազմի մեջ և այդ պատճառով շարունակ այնպիսի գիրք ե ընդունում, վոր ցանկացած բոպեյին կարողանա ողնել կրակով թե իր և թե հարեւան ջոկերին: Զեռքի զնդացիրը կարող է կրակել ամեն տեսակ տեղից, վորտեղից յերեռում է նշանը. բայց նա պետք է դանվի իր ստորաբաժնման առջեռում կամ թերում, վորպեսզի չըհարվածի իր մարտիկներին և հնարավորություն ունենա կրակելու հակառակորդի թեին:

Զեռքի զնդացիրը մասնակցում է զրոհին իր ստորաբաժնման հետ միասին՝ շարժվելով նրա հետ և ողնելով նրան իր կրակով մինչև վերջին հնարավորությունը: Այդ կրակը պետք է հափառակորդին լուրջ հարված հասցնի, իսկ վոր զլխավորն է, պետք ե ճնշի նրան և թույլ չտա անպատիժ կերպով բարձրանալ խրամատից՝ զրոհողին կրակով յետ մղելու համար: Դրա համար նշանառուն առաջ է ցատկում, արագ զետին և իջնում և առանց խնամքով հաստելու զնդացիրը, կրակ

և բացում գրոհի յենթարկվող կետին: Կարճ տարածում թյունից (100 մետր և ավելի մոտ) գրոհի դեպքում ձեռքի գնդացիրը կարելի յէ կրակել առանց կանգ առնելու, առանց գնդացիրը գետին իջեցնելու, այլ միայն կարճ ժամանակով կանգ առնելու: Այդպիսի հրածգությունը պահանջում է նշանառույից մեծ մարզվածություն և ֆիզիկական ուժ, հակառակ դեպքում այդ կառաջացնի միայն փամփուշաների ավելորդ ծախք:

ՀԱՐՑԵՐ


1. Ի՞նչպիսի տրամաչափ ունի Դեգտյարմի ձեռքի գնդացիրը;
2. Ի՞նչ ուժ և ոգտագործվում ձեռքի գնդացըրում ավտոմատիկ հրածգության համար:
3. Ի՞նչպիս են գնդացիրը վերալցնում:
4. Ի՞նչոր և տարբերվում ձեռքի գնդացըրի փողը հրացանի փողից:
5. Ի՞նչ և ներկայացնում ձեռքի գնդացըրի պահեստարանը և ի՞նչքան փամփուշտ և զետեղվում նրա մեջ:
6. Ի՞նչոր ձեռքի գնդացիրը խմբակային զենք և հանդիսանում:
7. Ի՞նչ և հիմնական տարբերությունը՝
ա) ձեռքի գնդացըրի և պիստոլետ-գնդացըրի,
բ) ձեռքի գնդացըրի և ավտոմատիկ հրացանի,
գ) ավտոմատիկ և կիսավոռմատիկ (ինքնալից) հրացանի:
8. Ի՞նչպիսի պրակտիկ արագածություն ունի ձեռքի գնդացիրը:
9. Կրակի ի՞նչպիսի տեսակներ են գործադրվում ձեռքի գնդացըրով կրակելիս:
10. Կարելի՞ յէ արդյոք ձեռքի գնդացըրով կրակել առանձին նշանաների զեմք և ի՞նչպիս և կատարվում այդ հրածգությունը:
11. Ի՞նչպիսի ամենամեծ հետափորության վրա կարելի յէ կիրառել գործոն կրակը ձեռքի գնդացըրով:
12. Ի՞նչպիսի հիմնական կրակային ինդիր և կատարում ձեռքի գնդացիրը մարտում:
13. Կարելի՞ յէ արդյոք կրակել ձեռքի գնդացըրով սավառնակների դեմ և ի՞նչպիս և կատարվում այդ հրածգությունը:

14. Ինչի՞ յե ծառայում փայտե խեչմայրը, վորս գետին և խփում՝
գիշերով և ծխի մեջ կրակելու նպատակով գնդացիրը նախա-
պատրաստելու համար:
15. Ինչպես պետք է ձեռքի գնդացրով կրակել ծխի մեջ պաշտպա-
նության և հարձակման ժամանակ:
16. Ինչպես և դործում ձեռքի գնդացիրը դրոհի ժամանակ:
-

ԱՆՁՆԱԿԱՆ ԶԵՆՔ


Մոտ տարածություններից կատարվող գրոհի և բռնամարտի մոմենտներին անմիջական հարձակումից անձնական ինքնապաշտպանության համար՝ ուրիշ զենք չունեցող մարտիկների ու հրամանատարների համար ծառայում ե ալսպես կոչվող անձնական զենքը — ատքեանակը կամ պիստոլետը (նկար 12): Այդ զենքը չափազանց պարզ է իր կազմությամբ, ունի փոքր չափեր ու քաշ, հարմար է թե կրելու և թե գործածելու համար և միշտ ել պատրաստ է գործողության համար, բայց այլ բաներում նրա մարտական հատկությունները, բնականաբար, յետ են մնում հրաձգային զենքի մյուս տեսակներից:

Ատրճանակի և պիստոլետի հիմնական տարրերությունն այն է, վոր ատրճանակն ունի խփելու մի փոքր ավելի մեծ կուտակություն, իսկ պիստոլետն ունի ավելի մեծ արագածություն: Վորովհետև ատրճանակն ու պիստոլետը ծառայում են ինքնապաշտպանության համար, այդ պատճառով նրանց հրաձգության հեռավորությունը մեծ չե: ատրճանակից արձակած գնդակի թոփչքի հեռահասությունը հասնում է 700 մետրի, իսկ պիստոլետից արձակած գնդակը՝ 800—1000 մետրի, բայց նրանցով նշանոցային դիպուկ կրակ կարելի յե կիրառել միայն մինչև 100 մետր հեռավորության վրա: Մեծ հեռավորության վրա հրաձգության համար այդ զենքը պետքական չե, վորովհետև մշտական նշանոցը, նշա-



ՏԱԿԻՆՈՅԻ ՊԻՍՏՈԼԵՏ (ՏՐԴ 1930թ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԻՍՏՈԼԵՏ (ՏՐԴ 1895թ)



Նկար 12. Անձնական զենքը և այն կրակելու յեղանակները:

նոցային կարճ գիծը և կոթի (պրովադ) բացակայությունը չեն ապահովում ձիգի դիպուկությունը:

Ատրճանակն ունի թմբուկ, վորի մեջ զետեղվում և 7 փամփուշտ: Հրահանը վոտքի վրա դնելիս, նա կանգնում է մարտական վոտքի վրա, և թմբուկը հատուկ հարմարանքի միջոցով շրջվում է այնպես, վոր թմբուկի փամփուշտոցներից մեկում զետեղված հերթական փամփուշտը կանգնում է՝ զարկանի ասեղն անցնելու համար ուղանեակում յեղած անցքի ուղիղ դիմացը, իսկ իր առջեկի կողմով փամփշտանոցը դրվում է փողանցքի ձիշտ դիմացը:

Ատրճանակով կարելի յե կատարել 7 դիպուկ ձիգ 10 — 20 վայրկյանի ընթացքում: Սակայն մարտում ատրճանակը լցնելը շատ դժվար է և այդ պատճառով մարտական պարագայում այդ պետք է անել վաղորոք:

Պիստոլետը, հրացանի նման, ունի պահեստարան, վորը լցվում է 8 փամփուշտով և դրվում է բռնակի մեջ: Բայց ատրճանակից նա տարբերվում է նրանով, վոր պիստոլետը վերալցնելու համար ողագործվում է հետահարվածի ուժը, ուստի նրանով կարելի յե ավելի արագ հրաձգություն կատարել, քան թե ատրճանակով:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչի՞ յե ծառայում անձնական զենքը:
2. Ի՞նչն է պիստոլետով և ատրճանակով ավելի դժվար և հարվածել նշանը, վոր դանվում է նրանց հրաձգության վերջնակետ հասողությունից դուրս:
3. Ի՞նչ առավելություններ ունի պիստոլետը:
4. Ի՞նչի՞ համար և ոգտագործվում հետահարվածի ուժը պիստոլետում:
5. Ի՞նչ հեռավորությամբ կարելի յե դիպուկ նշանոցային կը կիրառել ատրճանակով կամ պիստոլետով:

ԶԵՐՔԻ ՆՌՆԱԿՆԵՐ


Հրացաններն ու գնդացիրները հուսալիորին հարվածում են միայն փոքրիշատե բաց գասավորված հակառակորդին: Իսկ յերբ հակառակորդը գրավում է խոր խրամատներ, փոսեր, ամուր պարիսպներով տներ, հրացանների ու գնդացիրների կրակի մեծ զետնամերձության հետևանքով նրան շատ դժվար է, իսկ հաճախ միանգամայն անհնարին է հարվածել գնդակով: Այդպիս ծածկված հակառակորդին հեռու տարածություններից հարվածելու համար ծառայում է հրետանին: Բայց հրածգային մոտակա մարտում, յերբ մարտիկները մոտենում են համարյա ընդհուպ, հրետանին, վորպեսզի չհարվածի իր զորքերին, ստիպված ե լինում կրակը տեղափոխել խորքը: Այդ գեպքում ծածկված հակառակորդին հարվածում են ամենից առաջ ձեռքի նոնակներով:

Զերքի նոնակը ներկայացնում է մի փոքրիկ պայթուցիկ արկ, վորը նշանին նետվում է մարտիկի ձեռքով (Նկար 13 — 16): Նրա քաշը, նայած տիպարին, լինում է 500-ից մինչև 1000 գրամ, իսկ պայթուցիկ նյութի կամ նրա լիցի քաշը լինում է 50-ից մինչև 400 գրամ:

Ժամանակակից ձեռքի նոնակներն այնպես են կազմված, վոր նրանք ապահովում են նետող մարտիկի լիակատար անվտանգությունը: Դրա համար վորպես պայ-

թուցիկ լից գործադրվում ե այնպիսի նյութ, վորը պայթում ե միայն այն դեպքում, յերբ նոնակի ներսում պայթում ե բուծինը (չափական): Բուծինը շարունակ պահպան է նոնակից առանձին և նրա մեջ ե դըրվում միայն նետելուց անմիջապես առաջ (յերբ, ինչպես ասում են, նոնակը «լցնում են»):


Բուծինը բոցավառվում է նետելու մոմենտին, յերբ նոնակն արդեն արձակված է նետողի ձեռքից, իսկ պայթյունը տեղի յե ունենում բոցավառվելուց 3,5—4 վայրկյան անց, այսինքն՝ յերբ նոնակն արդեն կթռչի զնետման տարածությունը և կընկնի նշանի մոտ:




Նկար 13. Թիմիական ձեռնանոնակ:



Նկար 14. Զեռնանոնակը նետելու յեղանակները տարբեր դիրքերից՝ ծնկի վրա, պառկած ու կանդնած:



Նկար 15. Զեռնանոնակի նետումը տարբեր գեպերում. — Խը-րամատների մեջ զրոհողի վերջին հարձակումից առաջ (ձախ կողմում), տան լուսամուտին (կենտրոնում) և գրաված խրա-մատոյ մաքրելու համար (աջ կողմում):



Նկար 16. Զեռքի նոնակ նետելը պաշտպանության մեջ՝ ջոկի բոլոր մարտիկներով սխաժամանակ։ Զախ կողմում՝ նետելուց առաջ, աջ կողմում՝ նետելուց անմիջապես հետո։

Զեռքի նոնակները կովի լավ միջոց են հարձակման ու պաշտպանության ժամանակ։ Բայց վորովհետև դրա հետ ցանկալի յե ստանալ տարրեր գործողություն, այդ պատճառով նոնակները լինում են հատկապես պատճենական։ և հարձակողական-պատճենական։ Վերջին տեսակի նոնակներում ոգտագործվում ե հանովի պողպատե պաշտպանողական շապիկ, վորը հնարավորություն ե տալիս գործազրելու միևնույն նոնակը հարձակման և պաշտպանության ժամանակ։

Պայթման ժամանակ ձեռքի նոնակները տալիս են 1000—3000 րեկոր (կտոր), վորոնցից հարվածելու ընդունակ են սովորաբար միայն 400—500-ը։

Բացի կենդանի ուժը հարվածելուց, նոնակն ոգնում է լարափակոցների, թույլ ամրությունների, —որինակ՝

փայտե ցանկապատը, խրամատի թեթև շքարանն (ԿՕՅԱՐԵԿ) ավերելու գործում: Նոնակների կապոցով կարելի յե հաջողությամբ հարվածել զրահապատ ավտոմոբիլը կամ տանկը:

Կարող են գործադրվել նաև Քիմիական նոնակներ, վորոնք լցվում են ԹՆ-ով (նկար 13): Այդպիսի նոնակի պայթելու ժամանակ գոյանում և ԹՆ ամպ: Քիմիական նոնակի նման ե կազմված նաև ծխալին նոնակը, վորը պայթելու գեպքում տալիս ե անթափանց ծխի ամպ:

Ցոլոր դեպքերում ել նոնակը պետք ե պահպանել ցնցումներից, հարվածներից և խարույկի մոտ տաքանալուց, վորովհետեւ նոնակների ուժեղ հարվածները և ջերմացումը կարող են պայթյուն առաջնել:

Չեռքի նոնակները նետելու հիմնական յեղանակները և մարտական գործադրությունը ցույց են տրված 14, 15 և 16-րդ նկարներում:


1933 թ. ՏԻՊԱՐԻ ԶԵՐՓԻ ՆՈՆԱԿ

Կարմիր բանակն իր սպառագինության մեջ ունի թե հատուկ պաշտպանողական և թե հարձակողական-պաշտպանողական նոնակներ: Վերջիններիս թվին ե պատկանում 1933 թ. ՏԻՊԱՐԻ ձեռքի նոնակը (նկար 17), վորի քաշն ե 500 գրամ (պաշտպանողական շապկի հետ՝ 600 գրամ):

Այդ նոնակը հարմարեցված ե թե հարձակողական և թե պաշտպանողական մարտում գործելու համար: Պայթելիս նոնակը տալիս ե մինչև 25 մետր տարածության վրա հարվածող 2000 բեկոր: Պաշտպանության

Ժամանակ, յերբ նոնաձիգը կարող է հուսալիորեն ծածկվել խրամատում և իր նոնակի բեկորներով հարվածվելու վտանգի չի յենթարկվում, նոնակի հարվածող ներդործությունն ուժեղացնելու նպատակով նրանվրա

Պայթեցման լոց



Նկար 17. 1933 թ. տիպարի ձեռքի նոնակի կտրվածքը:


Հազգնում են պատճանողական պողպատե ռապիկ: Շապկով նոնակը պայթելիս տալիս է մոտ 2400 բեկոր, վորոնք հարվածում են արդեն պայթյունի վայրից մոտ 100 մետր հեռավորության վրա: Այդ պատճառով շապկով նոնակն ոգտագործվում է պաշտպանության ժամանակ, իսկ հարձակման ժամանակ նոնակն ոգտագործվում է առանց շապկի, վորովհետև վերջին դեպքում քայլելու միջոցին նետելով նոնակը, մարտիկը կարող է բացեփաց շարժվել նրա հետեխց, առանց վախենալու, թե կարող է հարվածվել նրա բեկորներով:

1933 թ. տիպարի նոնակն ունի թիթեղե կորպուս, վորի մեջ գտնվում է պայթուցիկ իֆցը: Բոցավառող մեխանիզմը հավաքված է բանակի մեջ, վորը գործարանից նոնակը բաց թողնելիս զրվում է առանձին յերկաթե արկղի մեջ: Յերբ նոնակը հանձնվում է մարտիկների ձեռքը, բոնակը պառւտակվում է կորպուսին (նկար 18):

Յերբ բոնակը պառւտակվում է նոնակի կորպուսի կենտրոնական փողակին, բոնակի ներքին փողակն անշարժ ամրացվում է նոնակի կորպուսին (բոնակը յետ պտուտակել չի թողնում հատուկ արգելակող ասաղը): Մինչդեռ բոնակի դրսի փողակը, վորը ներքին փողակի հետ ամրացված է միայն մարտական զապանակով և սահում է մարտական կանքի պահանգի (ՎԿԼԱԴԵՎ) փորատներով, կարող է յետ քաշվել ու շրջվել աջ և ձախ:

Մարտիկը հավաքած նոնակը կրում է նոնակի պայուսակում: Բուծինը պահվում է առանձին:

Նետելուց առաջ նոնակի մեխանիզմը զրվում է պահպանական վոտքի վրա և նոնակը լցվում է: Դրա համար նոնակը վերցնում են բոնակից այնպես(նկար 18-Բ),



Գ

Դ

Նկար 18. 1933թ. տիպարի նոնակը նետման պատրաստելը:
Ա—բոնակը կորպուսին պառատակելը: Բ և Գ—նոնակի լցնելը: Դ—նոնակի դրու-
թյունը ձեռքում նետելուց առաջ:

վոր բոնակն ուղղված լինի գեպի լցնողը, իսկ պահպա-
նական բուլիքը (չեկա) գեպի վեր. ձախ ձեռքով բոնում
են նոնակի կորպուսը, մինչև վերջ քաշում են բոնակի
դրու փողակը և միաժամանակ շրջում են գեպի ձախ
ու բաց թողնում: Յետ քաշելիս մարտական զսպանակը
ձգվում է, իսկ մարտական կանթը ճասնում և մինչև
պահպանակի փորատների զագաթը: Բոնակի դրու փո-
ղակը դեպի աջ շրջելիս, մարտական կանթը խոր փո-
րատների կտրուններից անցնում է մանր փորատները,
իսկ մարտական զսպանակն էլ ավելի յետ լարվում գե-

պի աջ (նա արդեն իսկ լարված էր, յերբ նոնակը հավաքել ելին գործարանում): Հենց վոր բռնակի գրափառակը բաց են թողնում, մարտական զսպանակը փոքր ինչ սեղմվում ե, փողակն առաջ և շարժվում, իսկ մարտական կանթի ծայրերը հասնում են պահանգի կըտրունի մանր փորատների հատակին: Մեխանիզմը կանգնում ե մարտական վոտքի դրության մեջ: Այնուհետև աջ ձեռքի բութ մատով պահպանական բուլիքը տեղափոխում են. մինչև վերջ զեպի ձախ այնպես, վոր բուլիքը ծածկի «կարմիր ազգանշանը»: Այդ զեպքում բուլիքի պահպանական սլաուլը կմանի պահանգի ներքին պահպանական փոսիկը, և մեխանիզմը կկանգնի պահպանական վոտքի վրա:

Մեխանիզմը պահպանական վոտքի վրա գնելուց հետո, նոնակը կարելի յել լցնել: Դրա համար յետ են քաշում բուծինի սողնակը, վորպեսզի բացվի կենտրոնական փողակի անցքը, և նոնակի կենտրոնական փողակի մեջ դնում են բուծինը՝ հրապատիճ-բոցավառիչը զեպի առաջ (նկար 18-Գ). այնուհետև քաշում են պահպանական բուլիքը, վորպեսզի նա ամրացնի բուծինը:

Նետելու համար լցրած նոնակը վերցնում են բռնակից այնպես, ինչպես ցույց ե տրված 18-Դ նկարում, և քաշում են մինչև վերջ պահպանական բուլիքը, վորպեսզի բռնակի դրսի փողակի վրա բացվի «կարմիր ազգանշանը»: Դրանից հետո ուժեղ թափով նետում են նոնակը նշանին: Նետելու հեռավորությունն ե մինչև 45 մետր:

Նետելիս, յերբ նետողը կտրուկ շարժումով, նոնակը բռնած, ձեռքն առաջ և մեկնում, նոնակի կորպուսը յետ և քաշվում դրսի փողակի բռնակից, վերջնակետա-

յին տարածության վրա ձգելով մարտական զսպանակը:

Բայց հենց վոր նոնակը բաց և թողնվում ձեռքից, նոնակի կորպուսը կտրուկ ձեռվ սեղմվում և և զարկանը ծակում և երապատիճ-բոցավառիչը. հրապատիճ-բոցավառիչը վառում և բուծինի հեռավորության փողակի վառողային բաղադրությունը (այդ բաղադրությունն այրվում է 3,5—4 վայրկյան): Նոնակը նշանի մոտ ընկնելուց հետո կրակը հասնում և նայրոիչին (գետնատոր), և նոնակը պայթում է:

Այսպիսով նոնակի մեխանիզմը բոցավառում և հրապատիճը միայն այն դեպքում, յերբ նոնակը նետված և նշանին: Իսկ յեթե լցված և նետելու համար պատրաստ նոնակը (պահպանական բուլիքն արդեն յետ քաշած նոնակն) անակնկալ ձեռվ վայր ընկնի ձեռքից, նաչի բոցավառի: Այդպիսի նոնակը կարելի յերբացնել և կրկին նետել:

1933 թ. տիպարի ձեռքի նոնակի մեխանիզմի այդ առանձնահատկությունը նրան առանձնապես հարմար և անվտանգ և դարձնում գործածության համար:

1933 թ. տիպարի ձեռքի նոնակները պահպառ են իջեցված մեխանիզմով, ամրացված պահպանական բուլիքով, վորպեսզի մեխանիզմը տեղափոխության ժամանակ չթափահարվի: Բուծինի սողնակը պետք և փակ լինի, վորպեսզի կենարոնական փողակի մեջ փոշի չըթափվի:

Նոնակը նետելու համար պատրաստելուց առաջ պետք է ստուգել մեխանիզմի աշխատանքը. 2—3 անգամ դնել մարտական վոտքի վրա և կրկին իջեցնել պահպանիչ փոտքի: Այս դեպքում բոլոր մասերն ել պետք և աշ

խառեն պարզութաշ ձեսվ, առանց միմյանց հարելու ու-
քսվելու: Յերբ հայտարկվում է վորեե անսարքու-
թյուն, պետք է մանրամասնորեն զննել նոնակը և դե-
կուցել իր հրամանատարին:

Անսարք նոնակը չի կարելի գոբծածել:


1914-1930 թ. թ. ՏԻՊԱՐԻ ԶԵՄԲԻ ՆՌՆԱԿԻ

Հարձակողական-պաշտպանողական նոնակի մի այլ
տիպարը, այսինքն՝ այնպիսի նոնակի, վորը կարող է
գործածվել թե հարձակման (դրոհի) և թե պաշտպա-
նության ժամանակ, հանդիսանում է **1914-1930 թ.թ.**
ձեռնի նոնակը (նկար 19): Նա կշռում է 700 գրամ
(պաշտպանողական շապկի հետ միասին՝ 850 գրամ):

Գայթելիս այդ նոնակը տալիս է 3000-ից ավելի բե-
կոր: Բեկորների թոշելու հեռահասությունը 1933 թ.
տիպարի նոնակի նման տարրեր և և կախված է այն
բանից, թե նետվում է նա արդյոք պաշտպանողական
շապկով թե առանց դրան:

Նոնակն առանց պաշտպանողական շապկի նետելիս
բեկորները հարվածում են՝ նետման վայրից վոչ ավելի
քան 15-20 մետր հեռավորության վրա: Իսկ յերբ նըռ-
նակը նետում են շապկով, բեկորները հարվածում են
մինչև 100 մետր հեռավորության վրա:

Նետելուց առաջ նոնակը լցնում են: Դրա համար
գարկանքը դնում են պահպանի վոտքի վրա, մարտական
զայանակն այդ դեպքում սեղմվում է: Այնուհետեւ նըռ-
նակի մեջ նրա հատակի անցքից դնում են բուծինք,
ըստ վորում կարեն ծունեկը երապատիճով հաստվում է
զարկանի ասեղի զիմաց, իսկ յերկար ծունեկը նայ-
ոփով իորդացվում նոնակի պայթուցիկ լիցի մեջ:



Նկար 19. 1914/1930 թ. թ. տիպարի ձեռքի նոնակը: Զախ կողմում—ընդհանուր տեսքը, աջ կողմում—կտրվածքը:

Վորպեսպի նոնակի մեջ դրած բուծինը նետելիս վայր չընկնի, տեղում ամրացվում է կեռ ու նեցող գոնակով:

Նոնակը նետելուց անմիջապես առաջ զարկանի պահպանական բուլիքը յետ և քաշվում և աղատում է զարկանը, բայց վերջինս խփելու վոտքի միջոցով մնում է վոտքը քաշած՝ բոնակի և խփելու վոտքի լծակի վրա հաղցրած ողի շնորհիվ:

Նոնակը նետելիս ողի պոկվում է բոնակից, խփելու վոտքի լծակն իր զսպանակի ներգործության տակ

բարձրանում և և ազատում և զարկանը: Մարտական զսպանակն արձակվելով՝ ուժով հրում և զարկանը: Զարկանի ասեղը բաղխվում և հըապատիճին և պայթեցնում և այն: Պայթած հրապատիճի կրակն անցնելով բուծինի հեռակայության մասից, փոխանցվում և ճայթռիչին. ճայթռիչը պայթում և և ոլայթեցնում և նոնակի պայթուցիկ լիցը: Նոնակի զրոխ շատիկը և նրա տակ գտնվող վանդակը պայթում են և բեկորները ցըրվում են այս ու այն կողմը:

1914|1930 թ. թ. տիպարի նոնակը ոլահվում և իջեցրած հրահանով. պահպանական բուլիքը գտնվում և երահանի հետեւում, իսկ պահպանական ողակը հազցված և նոնակի բռնակին:


Այդ նոնակը զործածության համար պատրաստելիս պետք և ստուգել, թե արդյոք լավ և հարմարեցված ողը և լավ և արդյոք՝ զուրս դալիս զարկանի ասեղը. բացի զրանից, ստուգվում և խփելու վոտքի լծակի, զարկանի, մարտական զսպանակի աշխատանքը, ինչպես նաև ամրող մեխանիզմի աշխատանքը:

Չի կարելի նետել նոնակն անսարք մեխանիզմով (պինդ ողով, կոտրած դռնակով կամ բուլիքով):

Ֆ-1 ՄԱՐԿԱՅԻ (ԿՈՎԵՇՆԻԿՈՎԻ ԲՈՒԾԻՆՈՎ) ՅԵՎ.

ՄԻԼՍԻ ԶԵՐՅԻ ՆՌՆԱԿՆԵՐԸ


Բացի 1914|1930 թ. թ. և 1933 թ. տիպարի նոնակ-ներից, մարտիկները կարող են ստանալ Փ-1 մարկայի (նկար 20) և Միլսի (նկար 21) նոնակներ: Այդ նոնակ-ները գործադրվում են միայն պաշտպանության ժամանակ: Ֆ-1 մարկայի նոնակը պայթելիս տալիս և մոտ 1000 բեկոր, վորոնք ցըրվում են մոտ 200 մետր հե-



Նկար 20. Ֆ-1 մարկայի, Կովենիկովի բուժինով
նոնակը:

ռավորության վրա. այդ նոնակը պետք է նետել անպայման ծածկաբանից:

Ֆ-1 մարկայի նոնակը (նկար 20) ունի չուգունե-



Նկար 21. Միլսի նոնակը: Զախ կողմում — ընդհանուր տեսքը,
աջ կողմում — կտրվածքը:

Կորպուս և կշռում է 700 գրամ: Պահելիս նա խցվում է սին խցանով (холостая пробка): Նետելուց առաջ հանում են սին խցանը և նոնակի մեջ պտուտակում են Կովեսնիկովի բուծինը, վորը պահպում է առանձին:

Կովեչնիկովի բուծինի մեջ սարված և բոցավառիչ մեխանիզմը և ինքը բուծինը (ճայթոփիչը):

Ֆ-1 մարկայի լցրած նոնակը նետելու համար անհրաժեշտ է ձեռքն առնել այն, ողից (առանց լծակն իշղիցնելու) ձգել պահպանական բուլիքը և թափով նետել նոնակը նշանին և անմիջապես ծածկվել, պաշտ-

պահնվել բեկորներից։ Պայթյունը տեղի յեւ ունենում
3,5—4 վայրկյանից հետո։

Ֆ-1 նոնակը գործելու համար պատրաստելիս՝ նոնա-
կի անցքից դուրս են հանում (յետ են պտուտակում)
սին խցանը և ստուգում են, թե պայթուցիկ լիցի մեջ
սին փամփշտի ձողակից փոսիկ մնացել եւ արդյոք։ Յե-
թե փոսիկ չկա, այդպիսի փոսիկ են անում փայտիկով։

Յերբ նոնակի անցքի փորակի (քըզբա) մեջ ընկել
են պայթուցիկ լիցի մասնիկներ, նախքան բուժինը
պտուտակելն անհրաժեշտ եւ մաքրել այդ մասնիկները։

Միլսի նոնակը (նկար 21) գործադրվում ենույն դեպ-
քերում, ինչ վոր Ֆ-1 մարկայի նոնակը։ Նրա քաշը
մոտ 350 զրամ ե, պայթյունը տեղի յեւ ունենում նե-
տելուց հետո 5—7 վայրկյան անց։ Պայթյունից նըռ-
նակը տալիս ե մինչև 1000 բեկոր, վորոնք ցըվում են
մինչև 200 մետր տարածության վրա։

Միլսի նոնակի, ինչպես և մնացած բոլոր նոնակնե-
րի (բացառությամբ 1933 թ. տիպարի նոնակի) նետ-
ման միջին հեռահասությունը մոտ 35 մետր ե։

Միլսի նոնակը պահվում ե՝ զարկանը պահպանիչ
վորքի վրա դրած։ Նոնակն ստանալիս հարկավոր ե
զննել այն։ Դրա համար յետ են պտուտակում ներքին
լայն պատուհանի տափողակը, և յերբ նրա ներսում,
կենտրոնական փողակում, փոշի, ժանդ կամ թանձրա-
ցած յուղ (քսուկ) ելլինում, պետք ե մաքրել այն՝
վրան լաթ փաթաթած փայտիկով։

Յերբ թանձրացած յուղը կարող ել խանգարել զար-
կանի իջեցմանը, մեխանիզմը քանդում են և խնամքով
սրբում կենտրոնական փողակը, զարկանը և մարտա-
կան զսպանակը։

1. Ինչպիսի՞ մարտական խնդիրներ են լուծվում ձեռքի նոնակ-ներով:
2. Կպայթի՞ արդյոք ձեռքի նոնակը, յեթե նետենք այն առանց բուծինի:
3. Կարելի՞ յե արդյոք բուծինը կրել գրպանում:
4. Ինչու յեն նոնակը պահպանում ուժեղ ջերմացումից (կրակին մոտիկ),
5. Ինչի՞ համար ե ծառայում 1933 թ. տիպարի նոնակի պաշտպանողական շապիկը:
6. Կարելի՞ յե արդյոք յետ պտուտակված բռնակը:
7. Ինչպես պետք ե պատրաստել 1933 թ. տիպարի նոնակը՝ նետելու համար:
8. Կարելի՞ յե արդյոք լցնել 1933 թ. տիպարի նոնակը, յերբ ի-ջեցված ե զարկանը:
9. Ի՞նչ կլինի, յեթե 1933 թ. տիպարի նոնակը նետենք փակած բռութիքով:
10. Ինչով է ավելի հարմար 1933 թ. տիպարի նոնակը 1914/1930թ.թ. տիպարի նոնակից:
11. Պայթյունի վայրից ի՞նչ հեռավորության վրա յեն հարվածում 1933 թ. տիպարի և 1914/1930 թ. թ. տիպարի (առանց շապիկի) նոնակների բեկորները:
12. Ինչու չի կարելի հարձակողական մարտում դործածել 1933 թ. և 1914/1930 թ. թ. տիպարի նոնակները շապիկով:
13. Ինչու 1914/1930 թ. թ. տիպարի նոնակի մեջ դրված հրապա-տիճ-ճայթուիչն ամրացվում ե իր տեղում կեռ ունեցող դրո-նակով:
14. Ինչի՞ համար ե ծառայում 1914/1930 թ. թ. տիպարի նոնակի բռնակի վրա հաղցրած ողը:
15. Նետելուց քանի՞ բռպե հետո յեն պայթում 1933 թ. և 1914—1930 թ. թ. տիպարների նոնակները:
16. Կարելի՞ յե արդյոք Ֆ-1 և Միլսի նոնակները գործադրել հար-ձակման ժամանակ.
17. Պայթյունի վայրից ի՞նչ հեռավորության վրա յեն հարվածում Ֆ-1 և Միլսի նոնակների բեկորները:
18. Նետելուց հետո քանի՞ վայրկյան անց տեղի յե ունենում Միլսի նոնակի պայթյունը:

ՀՐԱՑԱՆԱՅԻՆ ՆՌՆԱՆԵՏ

Ձեռքի նոնակը կովի գերազանց միջոց եւ մոտակա մարտում ծածկված հակառակորդի դեմ: Բայց ծածկված կենդանի մանր նշաններ, վորոնք չեն կարող հարվածվել հրացաններով ու գնդացիրներով, պատահում են նաև այնպիսի հեռավորությունների վրա (որինակ՝ մոտ 500 մետր հեռավորության վրա), վորոնց ձեռքի նըռնակը հասցնել չի կարելի: Այստեղ ձեռքի նոնակին ոգնության ե դալիս հրացանային նոնակը:

Դյակոնովի հրացանային նոնակով (նկար 22), վորը գտնվում է կարմիր բանակի սպառազինության մեջ, կարելի յե կրակել 150-ից մինչև 850 մետր հեռավորությամբ: Հրացանային նոնակները թռչում են ուղղորդող հետազծով (անհամեմատ ավելի ուղղորդ, քան թե գնդակները) և այդ պատճառով ընկնում են ծածկարանի մյուս կողմը: Դյակոնովի նոնաննետը հաջողությամբ գործադրվում է թե պաշտպանության և թե հարձակման ժամանակ՝ հարվածելու համար հակառակորդի կուտակված կենդանի ուժը և նրա կրակային կետերը խըրամատներում, ծածկարաններում և մեռյալ տարածություններում, մատուցցներում և այլն, վորտեղ՝ հակառակորդը ծածկվում և հրացանների ու գնդացիրների կրակից (նկար 24):

Նոնաննետներ կան հրաձգային յուրաքանչյուր դասակում:

Հայոց պատմութեան գիրազի տոկ.

Եթուական
առաջ

առաջարկաց ասաւուած աշխարհ

առաջարկաց ասաւուած աշխարհ



Առաջարկաց ասաւուած աշխարհ

Լարանքան

Տառարկան

Ուստի ու ուստի ու ուստի ու

Ուստի ու ուստի ու ուստի ու




Առաջարկաց ասաւուած աշխարհ

Հայոց պատմութեան գիրազի տոկ.



Հայոց պատմութեան գիրազի տոկ.



Հայոց պատմութեան գիրազի տոկ.



Ուստի ու ուստի ու ուստի ու

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎԱԾ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԳՈՐԾՈՒԻՄ
ՆՌՆԱՆԵՑԼ

Հավաքված հրացանային նոնանետը (նկար 22) կշռում ե մոտ 8 կիլոգրամ: Նա բաղկացած ե սովորական 7,62 միլիմետրանոց հրացանից, վորի փողարերանի մասի վրա հազցնում են հրացանային հրասանգիկ (սվինը հանվում ե):

Հրացանային նոնանետը կրակելու համար գործազրվում ե հրացանային նոնակ:

Հրացանային նոնակը հրաձգության ժամանակ դըրվում ե հրասանդիկի փողի մեջ (նկար 22): Վորպեսդի ձիգի ժամանակ նոնակն ստանա իր առանցքի շուրջը պտուտական շարժում (ինչպես և դնդակը), հրասանդիկի փողն ունի 3 առ, վորոնցով անցնում են նոնակի վարող յելունները: Փողի հետեւ ծայրն անշարժ պտուտակված ե միացման բաժակին, իսկ միացման բաժակի հետեւ ծայրին պտուտակված ե նիտը: Ճիտն ունի անցք հրացանի փողի վրա հազցնելու համար և ծընկավոր կտրուն հատակի հիմքին ամրացնելու համար:

Հրաձգության ժամանակ բարձրացման տարբեր անկյունների տակ հրացանին կայուն դիրք տալու համար ծառայում ե Եեցուկը: Նոնանետը հրաձգության համար հաստելիս նեցուկի վոտքերի սուր ծայրերը խրվում են զետնի մեջ: Նեցուկի կանգնակին ամրացված ե պահունակը, վորի մեջ դրվում ե հրացանը: Քաշելով կանգնակը՝ կարելի յե պահունակը սեղմիչով ամրացնել ցանկացած բարձրության վրա:

Հրացանային նոնանետը նշանադրելու համար ծառայում ե անկյունաչափ-կվադրանոր, վորն ամրացվում

և հրացանին անըփելի միջոցով (Նկար 22): Անըփելի ձախ կողմին ամբացված ե կվաղբանտի տուփը, իսկ աջ կողմին — անկյունաչափը տարադիտական քանոնի հետ: Կվաղբանտը ծառայում է նոնանետին անհրաժեշտ բարձրացման անկյուն տալու համար, իսկ անկյունաչափը՝ նոնանետը նշանին ուղղելու համար, ոգտվելով տարադիտական քանոնի կտրունից ու հատիկից:

Հրացանային նոճակը մի փոքրիկ արկ ե՝ մոտ 370 զրամ քաշով: Նա բաղկացած ե պողպատէ կորպուսից, վորը ներքեռում ծածկված ե տակակալով:

Դրսից կորպուսն ակոսներով կտրատված և առանձին բառակուսիների, վորակեսղի նաև հեշտությամբ պայթի:

Նոնակի ամրող կորպուսի յելկայնքով անցնում է կենտրոնական փողակը, վորը ծառայում ե գնդակն անցնելու համար:

Կորպուսի ներսում զետեղվում ե պայթուցիկ լիցը: Նա բաղկացած և 50 զրամ խիստ պայթուցիկ նյութից:


Կենտրոնական փողակի հետեւ ծայրին ամբացվում ե հեռակայության փողակը. նա ծառայում ե այն բանի համար, վոր նոնակը նշանի վրա պայթի տարրեր հեռավորություններից:

Պայթելու համար նոնակի հաստումը կատարվում է հատուկ հեռակայության սկավառակի դարձումով (սկավառակն ունի խազեր):

Հրաձգության հեռահասությունն ավելացնելու նպատակով նոնակն ունի լրացուցիչ գուրս նեման լից, վորը բաղկացած է մետաքսէ տոպրակի մեջ լցրած 2,5 զրամ անծուխ վառողից: Այդ լիցը սոսնձում են նոնակի որտուբառորին: Պայթելով ձիգի մոմենտին՝ նա ավելացնում է վառողային գաղերի՝ նոնակի հատակին

զործած ձնշումը, ուստի և՝ հրաձգության հեռահասությունը:

Հրացանի նոնակը խոնալությունից պահպանելու համար, հերմետիկ կերպով պտուտակում են հատուկ թասակի մեջ (նկար 23):



Նկար 23. Հրացանային նոնանետի ու հրացանային նոնակների կրելն ու գարսելը:

ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆԻ ՀՐԱՅԱՆԱՅԻՆ ՆՄՆԱԿՈՎ

Հրացանային նոնակով հրաձգությունը կատարվում է հրացանի սովորական մարտական փամփուշտներով (նկար 24):

Նոնակը հրասանդիկի մեջ դնելուց առաջ դրսի թասակը յետ են պտուտակում (նկար 23), և նոնակը նրանից աղատվում է: Այնուհետև հեռակայության փողակը դնում են անհրաժեշտ հեռավորության վրա:


Հրացանային նոնակը լցված նոնանետում, հասցրած
մինչև հրասանդիկի հատակը, կանգնում ե այնպես,
վոր կենտրոնական փողակի անցքը գտնվի հրացանի
փողաբերանի դիմաց:

Զիգի ժամանակ հրացանային մարտական փամփշտի
գնդակը գուրս ե թռչում հրացանի փողաբերանից և,
ընկնելով նոնակի կենտրոնական փողակի մեջ (Նկար
22), թռչում ե նրա միջով, ինչպես փողի միջով: Գըն-
դակի հետեւց հրասանդիկի միացման բաժակի մեջ ներ-
խուժում են հրացանային գնդակի վառողային առաձը-
դական զագերը, վորոնք ուժով հրում են նոնակը հա-
տակից: Յերբ նոնակի ունեցած լրացուցիչ լիցը պոկ-
ված ե, նոնակը կարող ե թռչել մինչև 300 մետր: Իսկ
յեթե լիցը մնում ե, նոնակը թռչում ե մինչև 850
մետր:

Յերբ ջերմ զագերը գիպչում են նոնակի հատակին,
կրակը վառում ե հեռակայության սկավառակի վա-
քում յեղած վառողը: Նոնակը նշանին թռչելու ընթաց-
քում կրակն աստիճանաբար այրում ե սկավառակի
վաքում յեղած վառողը, անցնում ե ճայթոփիչի փողակի
մեջ, այրում ե վառողային հապաղիչը և պայթեցնում
ե ճայթոփիչն ու ամրող նոնակը: Նոնակի պայթյունը
տեղի յե ունենում վորոշ տարածության վրա:

Նոնակի պայթյունից ստացվում ե 330 — 340 պող-
պատե բեկոր, վորոնք հարվածում են պայթման վայ-
րից 150 մետր հեռավորության վրա: Այդ պատճառով
մինչև 150 մետր կրակելիս նոնաձիգները պետք ե լավ
ծածկվեն, վորպեսզի նրանց չհարվածեն բեկորները:

Նոնանետը սպասարկում են 2 մարտիկ՝ նոնաձիգն
ու նրա ողնականը:



Նկար 24. Հրաձղություն հրացանային նոնանետով

Հրացանային նոնակներով հրաձդության ժամանակ ստացվում ե չափաղանց մեծ հետահարված. այդ պատճառով հրացանի կոթը կարելի յե հենել միայն գետնին. Յերբ այն հենելու լինենք ուսին, նա կարող է ջարդել անրակը (վոսկը):

Հրացանի կոթը զետնին հենելիս՝ փոս են փորում: Զմեռը կոթի տակ, բացի զրանից, գնում են հատուկ բարձիկ, վորպեսզի հրացանի ազուստը չճաքի. հրացանի կոթը չի կարելի հենել քարին կամ սասած գետնին:

Նոնակը լցնելիս, պատահական ձիգից խուսափելու համար, հրացանի փակաղակը պետք ե բաց լինի:

Նոնակը հրասանողիկի փողարերանի մեջ դնելով՝ պետք ե հետեւ, վոր վարող յելունները մտնեն կտրունների մեջ: Յերբ նոնակն արգեն զրված ե փողարերանի մեջ, փարտիչով (ճահնկ) այն հասցնում են մինչև հրասանողիկի հատակը (նկար 22), հակառակ դեպքում կսացվի ուժեղ չհասում (թերաթոփիչը):

Իրար հետեկից 50—60 ձիգ արձակելուց հետո պտուտակիչով ստուգում են հրացանի պոչի պտուտակն ու հենարանային պտուտակը, վորոնք հետահարվածից փոքրինչ յետ են պտուտակվում (թուլանում են):

Հրաձդության ժամանակ զիտում են նոնակների պայթման վայրը: Նոնակներն ամենից լավ են հարվածում նշանը, յեթե նրանք պայթում են նշանից 5 մետր վերև: 5 մետրից ավելի բարձր, ինչպես նաև զետնի վրա տեղի ունեցած պայթյաւնները թույլ են հարվածում:

Յերբ նոնակները պայթում են բարձր և նշանին ավելի մոտիկ, ավելացնում են փողակը (քառորդ կամ

կես վայրկյան), այն ժամանակ նոնակները կպայթեն ավելի ցածր և ավելի հեռու։ Իսկ յերբ չհասումները շարունակվում են, 1—2 տատիճանով ավելացնում են անկյունը։

Անգրանցումների գեղքում փոքրացնում են (կվադրանտով) անկյունը, վորպեսզի նոնակն ընկնի նշանի մոտ, վորից հետո նվազեցնում են փողակը, այդպիսով բարձրացնելով պայթյունները նշանի վրա։

Յերբ նոնակները լավ են ընկնում, կրակում են առավելագույն արագությամբ, մինչև նշանի լրիվ հարվածումը։

Նոնակները գործարանում զետեղում են ամեն մեկը հերսետիկ թասակի մեջ և, բացի դրանից, յուրաքանչյուր 32 հատ նոնակ զետեղում են փայտե արկղների մեջ, վորոնք պահպանում են ցնցումներից։ Արկղը բանալ թույլատրվում է միայն հրաձգությունից առաջ. մարտում՝ վաշտային փամփշտակայանում, իսկ վարժական/պարագայում՝ հրաձգարանում։

Դրսի թասակը չի կարելի բանալ վազորոք, վորովնետե առանց դրան նոնակը (մանավանդ խոնավ յեղանակին) միանգամայն անպետքանում է։

Թե՛ առանձին նոնակները և թե՛ նոնակներով լիքը արկղները կարող են պայթել կրակից և զնդակների կամ արկերի ընկնելուց։ Այդ պատճառով մարտում նոնակների պաշարը պահվում է ծածկված տեղերում (խրամատներում, նկուղներում)։ Նոնակների մոտ ծխելն արգելվում է։

ՀԱՐՑԵՐ

1. Գործողության ինչպիսի՞ հեռահասություն ունի Դյակոնովի հրացանային շանակետը։
2. Կարելի՞ յե՛ արդյոք հրացանային նոնանետով հարվածել խրամատում ծածկված նշանը։

3. Ինչի՞ մեջ և զրվում հրացանային նոնակը հրաձդության ժամանակ:
 4. Ինչի՞ յե ծառայում նեցուկը
 5. Ինչի՞ համար և անկյունաչափ՝ կվաղբանալը:
 6. Ի՞նչ ուժ և ոգտագործվում հրացանային նոնակով կատարած հրաձդության ժամանակ:
 7. Ինչպիսի՞ նեռավորության վրա յե թոշում հրացանային նոնակը. յերբ պոկված և լրացուցիչ լիցը:
 8. Պայթյունի վայրից ինչպիսի՞ հեռավորության վրա յեն հարվածում հրացանային նոնակի ըեկորները:
 9. Կարելի՞ յե արդյոք նոնանետով կրակելիս հրացանի կոթը հեռ ուսին:
 10. Ինչու նոնակը լցնելիս վակաղակը պետք եւ բաց լինի:
 11. Նշանի վրա ի՞նչ բարձրությամբ պետք և պայթի նոնակը:
 12. Ինչու մարտում նոնակների պաշարը պահպում և ծածկված տեղում:
-

ԹԵԹԵՎ ՀՐԱԶԴԱՅԻՆ ԶԵՆՔԸ ՄԱՐՏՈՒՄ

Հրաձգային զենքը, զանվելով անմիջականորեն հետևակի ու հեծելազորի ձեռքում, ապահովում է նրանց հաջողությունը մարտի բոլոր տեսակներում և մարտական բոլոր խնդիրների կատարման ժամանակ:

Հրաձգային զենքի առանձին տեսակների տարրեր հատկությունները հնարավորություն են տալիս, նըրանց հմուտ ոգտագործման զեպքում, բազմապիսի կըրակային խնդիրներ լուծելու: Հրաձգային զենքն ընդունակ է հարվածելու ամենամանը նշաններ (հակառակորդի մարտիկի պատահարար յերեացած զլուխը) և խոշոր մարտական մեքենաներ (ձեղքման տանկեր): Միաժամանակ մարտում հաջողություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է խնդիրներն այնպես բաշխել և այնպես կազմակերպել համագործակցությունը հրածագային գենեֆի բոլոր տեսակների միջեվ, վոր այդ զենքին մատչելի բոլոր կարեոր նշանները հուսալի ձեռվ հարվածվեն ըստ հնարավորին ամենակարճ ժամանակամիջոցում:

Բացի դրանից, չափազանց կարեոր և կազմակերպել հրածագային գենեֆի համագործակցությունը կովի այլ միջոցների հետ այնպես, վոր ստացվի մարտական խընդիրների ու փոխադարձ սպնության համապատասխան բաշխում բոլոր կարեոր զեպքերում: Այսպես, որինակ, հրածագային զենքի ու հրետանու միջև վազորոք բաշխ-

վում են նշանները, և, բայի դրանից, նրանք ողնում
են միմյանց, ցույց տալով նոր գտած նշանները և ձըն-
շելով առաջին հերթին այն նշանները, վորոնք ամենից
մեծ զիաս են հասցնում զորքերին։ Տանկերի հետ հա-
ջողությամբ համազործակցելու համար հրաձգային
ստորաբաժանումները ծանոթանում են նրանց խնդիր-
ներին, նրանց շարժման ուղղություններին և անընդ-
հատ դիտում են նրանց զործողությունները մարտում,
ոգնելով ճնշել կրակով հակառակորդի՝ իրենց սպառնա-
ցող կրակային միջոցները։ Եռյն ձևով իրազործվում
է հրաձգային դենքի համազործակցությունը նաև կովե-
այլ միջոցների հետ։

ՄԱՐՏԱԴԱՇՏԸՆՔ ԴԻՏԵԼԸ


Մարտում անհրաժեշտ ե աչալրջորեն և անընդհատ
դիտել հակառակորդին, վորպեսզի կարելի լինի անմի-
ջապես հայտաբերել նշանները և այնուհետև հետեւ
նրանց ու վորոշել մինչև այդ նշանները յեղած հեռա-
վորությունը։ Մարտադաշտը պարտավոր են դիտել թե
հատուկ նշանակված դիտողները և թե բոլոր մարտիկ-
ները։ Դիտողության արդյունքները պետք ե ճշտու-
թյամբ, համառոտ ձևով և ժամանակին զեկուցել հրա-
մանատարին։

Դիտողության հիմնական, ամենից հուսալի և ան-
խափան միջոցը դիտողի աչքերն են։ Բայց հաճախ
աչքերին ողնություն ե պետք, — որինակ՝ յերբ նշանը
այնքան հեռու յե գտնվում, վոր հասարակ աչքով դի-
տել չի կարելի։ Այդ պատճառով զորքերը դիտողության
համար ունեն զանազան զործիքներ։ Բայց հրացան-
ներով ու ձեռքի զնդացիքներով զինված մարտիկներն

ու ստորաբաժանումները հաճախ չեն ունենալ վոչ մի այլ գործիք և կտանան ամենից պարզ և մատչելի գործիքը, — պերփակով (շրջադիտակ):

Պերփակովը ծառայում է մարտադաշտը ծածկաբանից հետախուզելու, զիտելու և ուսումնասիրելու համար (Նկար 25): Աշխատելով պերփակով՝ զիտողը մնում է հակառակորդի համար անտեսանելի, ուստի և դժվար խոցելի:

Պերփակովը բաղկացած և փողակից: Փողակի վերին ու ներքին ծայրերում զետեղված են հայելիներ (հայելավոր պերփակովում), կամ ոպտիկական ապակիներ ու պրիզմաներ (ոպտիկական պերփակովում): Այն ա-



Նկար 25. Պերփակով: Զախ կողմում—հայելավոր, աջ կողմում—«Հետախույզ» ախպի ոպտիկական պերփակով:

մենք, ինչ արտացոլվում է վերին հայելու կամ պրիզմայի մեջ՝ փոխանցվում ենան ներքին հայելու մեջ կամ պրիզմայում: Այդ պատճառով զիտողը կարող երանց գլուխը հանելու խրամատից կամ ապաստարա-

Նից գիտել իր առջևում գտնվող տեղանքը և այնտեղ
կամ նրա վերեւում գտնվող առարկաները:

Հայելավոր պերիսկոպում ավելի վատ և յերեւում,
քան թե հասարակ աչքով: Դրանից տարբերվում են
ոպտիկական պերիսկոպները, որինակ՝ թեթև տիպի
«Հետախույզ» պերիսկոպը (նկար 25), վորը ծառայում
և հրաձգային ստորաբաժանումների հետախույզների և
դիտողների համար, տալիս ե 1 $\frac{1}{2}$ անգամ ավելացում,
այսինքն՝ կարծես 1 $\frac{1}{2}$ անգամ մոտեցնում և նրանով
դիտվող առարկաները: Այսպես, որինակ՝ յեթե պերիս-
կոպով դիտելու լինենք 3 կիլոմետր հեռու գտնվող
գնդացիրը, դիտողին գնդացիրը կթվա նույն չափի, ինչ
չափի նա կերևար, յեթե հեռու լիներ դիտողից միայն
2 կիլոմետր:

Պերիսկոպի այդ հատկությունները հնարավորու-
թյուն են տալիս մարտիկին հանգիստ, առանց իրեն
վտանգի յենթարկելու, դիտել մինչև իսկ այնպիսի մանր
նշաններ, վորոնք առանց պերիսկոպի չեյին յերևա կամ
շատ վատ կերևային:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԹԵԹԵՎ ՀՐԱԶԴԱՅԻՆ ԶԵՆՔԸ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՄ

Հարձակման ժամանակ ձեռքի գնդացիրներն ու երա-
ծիգները շարժվում են առանց կրակելու այնքան ժա-
մանակ, քանի դեռ այդ հնարավոր ե: Իսկ յերբ իր
հրետանու և հաստոցավոր գնդացրերի կրակն արդեն
չի բավականացնում, և հարձակվող հետեակը (հեծելա-
զորը) ստիպված է լինում հապաղել, կրակ են բաց ա-
նում սկզբում ձեռքի գնդացիրները, այնուհետև սնայ-
պերներն ու գերազանց հրաձիգները և վերջապես, մո-

տավորապես 400 մետրից, մնացած բոլոր մարտիկները՝ Դրա հետ միասին միշտ պետք է հիշել, վոր փամփուշտների պաշարը լրացնելը հարձակման ժամանակ առանձնապես դժվար է, այդ պատճառով իմաստ չունի հեռվից կրակ բանալ ձեռքի գնդացիրներով, իսկ առավել ևս՝ հրացաններով, վորովհետև պաշտպանվողը սովորաբար լավ է ծածկվում. իսկ ապարդյուն կրակը միայն փամփուշտների իդուր վատնման տեղիք է տալիս:

Հարձակվելով՝ հետեւակն ամենից հաճախ շարժվում է վոստյուններով ջոկ առ ջոկ (զասակ առ դասակ), ըստ վորում մեկ ջոկի շարժումը պաշտպանվում է՝ այդ միշտցին տեղում մնացած մյուս ջոկի կրակով: Մոտ տարածություններում գործադրվում է արդեն ջոկի մարտիկների վազեվազը միւմի հոգով, ըստ վորում ջոկի հրածիդների շարժումը պաշտպանվում է ձեռքի գնդացըով: Իսկ յերբ հրածիդները կրակ են բացում, նրանք իրենց կրակով ոլաշտպանում են ձեռքի գնդացը շարժումը: Կրակի ու շարժման այդպիսի կազմակերպության շնորհիվ հակառակորդը կրակի կամ հարվածման սպառնալիքի տակ կդժնվի ամեն անգամ, յերբ նա փորձ կանի խանդաբելու հարձակվողի տեղաշարժումը:

«**Եռանձեւերք**, դասավորվելով ծածկված դիրքում՝ մոտավորապես 600 մետր հեռավորության վրա, կարող են հարձակվողին մեծ ոգնություն ցույց տալ՝ հարվածելով ամենից կարեոր ծածկված նշանները: Այդպիսի նշաններ ամենից առաջ հանդիսանում են պաշտպանության ծածկված կողահար (թեից կրակող) գնդացիրները: Բացի զրանից, նրանք կհարվածեն հակառակորդի այն խմբակներին, վորոնք կուտակվում են ծածկարաններում հակագրոհի համար, ինչպես նաև պաշտ-

պանության հակատանկային ու գումարտակային հրանոթները: Վորովհեակ հրացանի նոնակների պաշարը չի կարող մեծ լինել, և այն լրացնելը շատ դժվար է, ուստի չափազանց կարեռը և նոնանեան ովտագործել միայն այնպիսի կարեռը նշանների գեմ կրակելու համար, վորոնք չեն հարվածվում դնդացիրների ու հրացանների կրակով: Իսկ յերբ նոնակներն ամբողջովին ծախսվում են, և չի հաջողվում լրացնել նրանց պաշարը, նոնաձիգները գործում են վորպես սովորական հրաձիգներ:

Գրոհից անմիջապես առաջ հետևակը կազմակերպում ե ուժգին կարճատե կրակային հարձակում իր կրակային բոլոր միջոցներով, վորոնց մեջ այդ մոմենտին ամենից մեծ նշանակություն են ստանում՝ հակառակորդին խրամատներում հարվածող հրացանային նըռնակները: Գրոհի նետվելով՝ 30—40 մետր հեռավորությունից՝ հակառակորդի վրա յեն տեղում ձեռքի նըռնակներ:

Գրոհի մոմենտին, յերբ մարտը փոխվում ե բռնամարտի, մարտիկները գործում են սվինով, հրացանի կոթով, ատրճանակով (պիսուկետով) և ձեռքի նոճակով: Վերջինս ծառայում ե զբաված խրամատը՝ նրանց մեջ մնացած հակառակորդի դիմագրող խմբակներից մաքրելու համար:

Զարգացնելով ձեռք բերած հաջողությունը, հետևակը (հեծելազորը) գործադրում ե հրաձգային գենքի բոլոր աեսակները, վորպեսզի վերջնականապես քայքայի ու ջախջախի հակառակորդին, չթույլատրելով նրան ամբանալ հաջորդ բնագծի վրա:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԹԵԹԵՎ ՀՐԱԶԳԱՅԻՆ
ԶԵՆՔԸ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՏՈՒՄ

Պատուցավոր հիմքը հանգիսանում ե հաստոցավոր գնդացիրների կրակը, վորը լրացնում են ձեռքի գնդացիրների ու հրացանների կրակով: Զեռքի գընդացիրների ու հրացանների մի մասը պաշտպանում են հաստոցավոր գնդացիրներն իրենց կրակով այն ուղղություններից զործած գրոհից, ուր կրակել չի կարողանում հաստոցավոր գնդացիրը: Մնացած ձեռքի գնդացիրներն ու հրաձիգները խնդիր են ստանում գնդակոծելու պաշտպանողական շերտի այն մատուցները, վորոնք թույլ են հարվածվում կամ ամենևին չեն հարվածվում հաստոցավոր գնդացիրների և իրենց հրետանու կրակով:

Յերբ հաստոցավոր գնդացիրները բավական չեն կողահար կրակ կաղմակերպելու համար, նրանց փոխարինում են՝ ճակատից հրաձիգներով պաշտպանված ձեռքի գնդացիրները:

Պաշտպանության հաջողության համար չափազանց կարևոր ե կրակային խնդիրները բաշխել այնպես, վոր հարձակվողի համար մատչելի վոչ մի մատուց, վոչ մի տեղամաս չմնա պաշտպանվողի կրակի հասանելիությունից դուրս:

Հրաձիգային զենքի կրակը պաշտպանության ժամանակ կարելի յե կենտրոնացնել և ապակենտրոնացնել:

Կենտրոնական կրակի զեպքում ձեռքի գնդացիրներն ու հրաձիգները, կամ միայն հրաձիգները, կրակում են միաժամանակ միենույն նշանին, որինակ՝ բաց դիրք դուրս յեկած հակառակորդի հրանոթին: Այդպիսի կը ըրակը հրամանատարի ձեռքում հանդիսանում ե հզոր

միջոց՝ առանձնապես վկասակար նշանները ճնշելու համար:

Ապակենտրոնացված կրակի դեպքում հրաձիգներն ու գնդացիբները կրակում են յուրաքանչյուրն ինքնուրույն կերպով հրամանատարի ցույց տված իրենց նըշաններին կամ տվյալ հրաձիգներին (գնդացիբներին) տրված սեկտորում հայտնվող նշաններին:

Ապակենտրոնացված կրակը սովորաբար կիրառում էն՝ ճակատով ու խորությամբ ցրված հակառակորդի դեմ:

Նոճանետը պաշտպանության ժամանակ ոմբակոծում է այն հակառակորդին, վորը կուտակվել է ծածկված մատուցներում ու տեղանքի խոր խորշերում և չենարվածվում գնդացիբների կրակով:

Զեռքի նոճակները պաշտպանության ժամանակ նետվում են հրամանով ամբողջ ջոկով, վորպեսզի պայթման մոմենտին բոլորն ել կարողանան ծածկվել խրամատում և պաշտպանվել բեկորներից (նկար 16): Դրոհող հակառակորդին դիմավորում են ձեռքի նոնակներով այն ժամանակ, յերբ նա կմոտենա 20—30 մետրի վրա:

Վերջապես՝ բռնամարտում, պաշտպանելով իր դիրքը, հետևակը, ինչպես և հարձակման ժամանակ, գործադրում է սպիթը, երացանի կորը, ատրճանակները (պիսուլետները) և ձեռքի նոճակները, ձգտելով խրամատները ներխուժած հակառակորդի խմբակները վոչնչացնել և առաջին խոկ հնարավորության դեպքում հակազրոհեանցնելու:

ԹԵԹԵՎ ՀՐԱՋԴԱՅԻՆ ԳԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ, ՅԵՐԹԻ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ

ԹԵՐԵ հրաձդային գենքի տարբերիչ հատկությունները հանդիսանում են նրա չափազանց դյուրաշարժությունը և շարունակ մարտի պատրաստ լինելը: Այդ պատճառով նա գործադրվում է գորքերի բոլոր սեսակի մարտական գործունեյության ժամանակ, վարոնց թվում նաև հետախուզության, յերթի ու պահպանության ժամանակ: Այս բոլոր գեղքերում, նայած սարտական խնդրին ու պարագային, հրաձդային գենքը գործադրվում է նույն ձևով, ինչ վոր հարձակման կամ պաշտպանության ժամանակ: Յերթում հատուկ նշանակություն ե ստանում պայքարը հակառակորդի ավեցիայի ու ավտո-զրահատանկային մասերի դեմ: Ավեցիայի դեմ պայքարելու համար, բացի հատուկ դենիթային գնդացիրներից, գործադրվում են նաև այլ գընդացիրներ ու հրացաններ: Ավտո-զրահատանկային մասերի դեմ պայքար ե մզում ամենից առաջ գումարտակային հրետանին, վորին լանհրաժեշտ գեղքերում ոգնում են գնդացիրներով, հրացաններով ու նոնակներով:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչու մարտում բաշխում են խնդիրները և կազմակերպում համագործակցություն հրաձդային գենքի բոլոր տեսակների միջև:
2. Հարձակման ժամանակ յերբ են կրակ բաց անում հրացաններով ու ձեռքի գնդացիրներով:
3. Ինչու հարձակման ժամանակ պահանջվում է առանձնապես դիպուկ կրակ:
4. Ինչպես են շարժվում ջոկերը հարձակման ժամանակ և ինչու են պաշտպանվում առաջինադաշտան ցատկումները:

5. Ինչպիսի՞ նշանները են հարվածում հարձակման ժամանակ նըռա-
նանետերը և ի՞նչ հեռավորությունից են նրանք կրակ բաց-
անում:
 6. Ի՞նչ են անում նոնաձիգները՝ նոնակների պաշարը վերջաց-
նելուց հետո:
 7. Յերբ և ինչպես են հարձակման ժամանակ դործադրվում ձեռ-
քի նոնակները:
 8. Պաշտպանության ժամանակ ինչպիսի՞ նշանների դեմ են կենտ-
րոնացված կրակ կիրառում:
 9. Ինչպես են կիրառում պաշտպանության ժամանակ ապակենտ-
րոնացված կրակը:
 10. Յերբ և ինչպես են դործադրվում ձեռքի նոնակները պաշտ-
պանության ժամանակը:
-

Հրաձգային զենքը հանդիսանում է հարվածելու հղոր
միջոց։ Այդ պատճառով բնական է, վոր զորքերը գոր-
ծադրում են զանազան միջոցներ, վորոնք պաշտպա-
նում են նրանց կամ նվազեցնում են այդ զենքով հար-
վածվելու հավանականությունը։

Ինչպես հայտնի յե, հրացաններով ու գնդացիրնե-
րով ամենից հեշտ է հարվածել բաց, լավ դիտվող նը-
շանները։ Այդ պատճառով հրացանային ու գնդացրա-
յին կրակից պաշտպանվելու համար զորքերն աշխա-
տում են ամենից առաջ ծածկվել ու թագնվել (քողարկ-
վել) հակառակորդից։ Հրացանների ու գնդացիրների
հետագծերի գետնամերձության շնորհիվ գնդակներից
կարող են պաշտպանել տեղանքի մինչև անդամ փոքր
անհարթությունները (առնվազն 50 սանտիմետր բարձ-
րությամբ կամ խորությամբ)՝ առուները, արկերից
առաջացած ձագարները, բլրակները և այլն։ Իսկ գըն-
դակներից հուսալիորեն պաշտպանող ծածկաբանների
հաստության մասին կարելի յե դատել չա և չք
նկարներից։ Այդ միջոցներով ել ոգտվում են մարտիկ-
ները մարտադաշտում։ Իսկ յերբ չկան բնական ծած-
կաբաններ, մարտիկներն իրենք են ստեղծում այն,
թիու ոգնությամբ պատրաստելով զանազան խրամատ-
ներ։ Զորքերը քողարկվում են նույնպես ոգտագործե-
լով բնական ու տեխնիկական միջոցներն ու յեղանակ-
ները, վորոնք հնարավսրություն են տալիս հակառա-
կորդին խարելու և կարևոր նշաններ գտնելու ու հար-
վածելու զործը դժվարացնելու։


Հրաձգային զենքի ու մանավանդ գնդացիրների կրակից

Աղօրուստաները նվազեցնելու համար զորքերը կործառքում են հատուկ մարտակարգեր: Անցյալ ժամանակներում, յերբ գնդացիրներ չկային զորքերը հարձակվում եյին խիտ զորացյուներով, իսկ հետո՝ յերկար շղթաներով (դասակներով ու վաշտերով բաց շարքերով): Իսկ այժմ գնդացիրների կրակի տակ հետեակը շարժվում է առանձին մանր խմբակներով՝ ջոկերով, և այդ հնարավորություն ե տալիս ավելի լավ ոգտագործելու տեղանքի բոլոր անհարթությունները (ծածկված մատուցները) և դժվարացնում ե հակառակորդի համար՝ միանդամից մեծ քանակությամբ մարտիկներ հարվածելու հնարավորությունը: Այդպիսի կարգը պահանջում է կրտսեր հրամանատարներից և բոլոր մարտիկներից մեծ հմտություն և անձնական պատրաստություն: Վատ վարժված ու չմարզված ստորաբաժանումները միշտ ել մեծ կորուստներ կլրեն:


Յերբ տեղանքը թույլ ե տալիս, մարտիկները քայլում են կամ առաջ են սոզում, ամբողջ ժամանակ մընալով ծածկված: Իսկ յերբ շարանով ծածկվել հնարավոր չե, շարժումը կատարվում ե վաղեվաղքով:

Վորպեսպի հակառակորդը չկարողանա լավ նշան բըռնել, ուստի և չկարողանա դիպուկ կրակել, վաղեվաղքը մեկ ծածկաբանից մինչև մյուս ծածկաբանը պետք ե կատարել չափաղանց արագ, ոգտագործելով իր հրետանու և հետեակի մյուս ստորաբաժանումների կրակի ուժեղացումը:

Կրակի տակ շարժվելու կարգը սահմանում է ջոկեի հրամանատարը՝ նայած տեղանքին, մինչև հակառակորդը յեղած հեռավորությանը և ստացած մարտական ինդըրին:



Նկար 26. Հրաձգի դրությունը հրաձգության ժամանակ:
Ներքեռում ցույց են տրված նշանի այն չափերը, վոր հրաձիգը
ներկայացնում է հակառակորդի համար:



Նկար 27. Վահան խրամատում:

Յեկ շարժման, և՝ կրակի տակ կանգառումների ժամանակ մարտիկները միշտ ել պետք ե աշխատեն ներկայացնել ըստ չափի ամենափոքր նեանքը։ Դրա համար կրակի տակ վազելվագը կատարելով, կունում են, իսկ կանգառումների ժամանակ պառկում են ճակատի գծի լայնքով (նկար 26), բայց անպայման այնպես, վորհարմար լինի կրակել։

Ինչպես ցույց տվեց վերջին պատերազմների փորձը, հետեւակի մարտիկներն ամենից հաճախ հարվածվում են զլիսից։ Այդ պետք ե շարունակ հիշել և իզուր չհանելով գլուխը ծածկարանից, ողտագործել յուրաքանչյուր քողարկ։ Մարտիկի գլուխը գնդակներից ու բեկորներից պաշտպանելու համար ներկայումս կան պողպատե սաղավարտներ (կառա) (նկար 3)։ Մոտ տարածություններից գնդակները հաճախ ընդուտում են զործում սաղավարտից, իսկ հեռու տարածություններից սովորական հրացանային (գնդացրային) գնդակներն առավել ևս չեն ծակում սաղավարտը։ Դիտողների զըլլուխը յերբեմն պաշտպանում են նաև պողպատե վահաններով (նկար 27)։

Այսպիսով զորքերն ունեն հուսալի միջոցներ ու յեղանակներ հակառակորդի հրաձգային դենքի կրակից պաշտպանվելու համար. դրանց հմուտ ողտագործումը լիակատար հնարյավորություն ե տալիս այդ կրակը սակավ գործոն դարձնելու։

ՀԱՐՑԵՐ

1. Տեղանքի ինչպիսի՞ անհարթությունները կարող են ծածկան ծառայել հրացանների ու գնդացիրների կրակի գեմ։
2. Պաշտպանում են արդյոք խրամատները հրացանային ու գնդացրային կրակից։

- Յ. Խչմւ յե հետեակլը մարտադաշտում շարժվում առանձին մանր
խմբակներով:
- Յ. Խչպես են շարժվում հրածիդները հակառակորդի կրակի տակ՝
ծածկարանների բացակայության դեպքում:
- Յ. Խչի՛ յեն ծառայում պողպատե սաղավարտները:



Բովանդակություն

Եջ

ԻՆՉ	ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	3
	ԴՆԴԱԿ ՅԵՎ ՓԱՄՓՈՒՇՏ	10
	ՀՐԱՑԱՆ	16
ԽՆՀԱՊԵՍ	և կազմված և ինչպես և գործում հրացանը	17
ՀՐԱՋՈՒԹՅՈՒՆ	ձեռքի գնդացրով	19
	ԶԵՌՔԻ ԳՆԴԱՑԻՄ	24
ՁԵՌՔԻ ԳՆԴԱՑՐԻ	կազմությունն ու նրա գործողությունը	24
ՀՐԱՋՈՒԹՅՈՒՆ	ձեռքի գնդացրով	30
	ԱՆՁԱԿԱՆ ԶԵՆՔ	37
	ԶԵՌՔԻ ՆՇԱՆԱԿՆԵՐ	40
1933 թ.	տիպարի ձեռքի նոնակ	44
1914/1930 թ.	տիպարի ձեռքի նոնակ	50
Ֆ-1 մարկայի (Կովեշնիկովի բուժինով)	և Միլսի ձեռքի նոնակ-	
ներ		52
	ՀՐԱՑԱՆԱՑԻՆ ՆՇԱՆԱԵՏ	57
ԽՆՀԱՊԵՍ	և կազմված և ինչպես և գործում նոնանետը	59
ՀՐԱՋՈՒԹՅՈՒՆ	հրացանային նոնանետով	61
ԹԵԹԵՎ	ՀՐԱՑԳԱՑԻՆ ԶԵՆՔԸ ՄԱՐՏՈՒՄ	67
ՄԱՐՏԱՊԱՀՄԸ	դիմելը	68
ԽՆՀԱՊԵՍ	և գործադրվում թեթև հրաձգային զենքը հարձակողա-	
կան մարտում		70
ԽՆՀԱՊԵՍ	և գործադրվում թեթև հրաձգային զենքը պաշտպանո-	
ղական մարտում		73
ԹԵԹԵՎ	հրաձգային զենքի գործադրությունը հետախուզության,	
	յերթի ու պահպանության ժամանակ	75
ԹԵԹԵՎ	ՀՐԱՑԳԱՑԻՆ ԶԵՆՔԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ	77

Պատ. խմբագիր՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Լեզվական խմբագիր՝ ՀԱՐ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Լ. ՌԱՆՑԱՆ
Սրբադրիչ՝ Մ. ՄԱՐՏԻԿՅԱՆ
Կոնտըռու սրբադրիչ՝ Ա. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Գլավլիտի լիազոր՝ Ղ—3621. Հրատ. № 4514

Պատվեր 181. Տիրաժ 3000

Թուղթ. 72×105 Տպագր. 2,6 մամ.

Մեկ մամ. 25.600 նշան.

Հանձնված ե արտադրության 17 փետրվարի 1938 թ.

Ստորագրված ե տպագրության համար 7 մայիսի 1938 թ.

Գինը 1 ր.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0055927

[504]

Изъят из архива.

A I
2609
16006



A I
16006

Б. Алексеев и В. Прудцов
ЛЕГКОЕ СТРЕЛКОВОЕ ОРУЖИЕ
Гиз Арм. ССР, Ереван, 1938